1084

891.710
L-77

W 369 5884

89.71-05
Ե-47
ար

Ծուէր մանուկներին

ԵՐԳՕՂՄԿՃՅԸ

ԳԻՔՂՈՒՄ

ՄԵՏԱԿԱՆ-ՀԱՅԿԱԿԱՆ
2004

Թարգմ. ռուսերէնից

ՀՈՎՀ. ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Публичная Библиотека
7/XI—1922
имени А. Мацнашвили
Ա. ՄԱՑԱՇՎԻԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԹԻՖԼԻՍ
Տպարան Ե. Մարտիրոսեանցի. || Типографія И. Мартиросіанца.
Орбеліановская ул., д. № 1|2.
1898

Дозволоно цензурою, Тифлисъ, 13-го Декабря 1897 года.

ՄԵՐ ԳԻՒՂ ԳՆԱԼԸ



Բաւ, Հեղինէ, Սաթենիկ, գիտէ՞ք ինչ նորութիւն պէտք է ասեմ ձեզ, աղաղակում էր Սուրէնը, ներս մտնելով մանկանոցը.—նա բոլորովին կարմրել էր և աչքերն էլ ուրախութիւնից փայլում էին:

Երեխաները դէն ձգեցին իրանց գլուխները, խաղալիքները և վազեցին նրա մօտ:

—Ի՞նչ կայ, ի՞նչ է պատահել, որ այդպէս ուրախ ես, չորս կողմից հարցրին նրանք Սուրէնին:

—Գիտէք, մենք չուտով գիւղ ենք գնալու և գուցէ հէնց այս երկու օրս գնանք: Այս ասելով՝ նա սկսեց ծափ տալ ու թռչկոտել: Երեխաները չատ ուրախացան:

—Դէ՛, ասա, դու այդ ի՞նչպէս իմացար, հարցրեց Հեղինէն Սուրէնին:

—Այս բոպէին հայրիկը տուն վերադարձաւ

և ասաց մայրիկին. «Հիմա ես վերջացրի բոլոր գործերս և պատրաստ եմ գիւղ գնալ, երբ կա-մենաս»: Ես հէնց որ այդ լսեցի՝ իսկոյն վազեցի ձեզ մօտ:

—Օ, ուրեմն մենք չուտով կերթանք, ասաց Աբրամը. ես գիտեմ, որ մայրիկն էլ մեզ պէս ուզում է չուտով ամարանոց գնալ: Եկէք գնանք նրա մօտ և հարցնենք, թէ ե՞րբ ենք ճանապարհ ընկնում:

Երեխաները վազեցին մայրիկի սենեակը:

—Մայրի՛կ, ասա՛ տեսնենք մենք ե՞րբ, ո՞ր օրն ենք ճանապարհ ընկնելու, գոչում էին երեխաները միասին:

—Շուտով, շուտով, հանգստացէք և բոլորդ միասին մի՛ խօսէք:

—Մայրի՛կ, չէ՞ կարելի, որ հէնց վաղը գընանք, հարցրեց Սուրէնը:

—Օ, Սուրէն, դու չափազանց չտապում ես, ասաց դայեակը, որի ականջին նոյնպէս հասել էր գիւղ գնալու լուրը, ուստի եկել էր հարցնելու ճի՞շտ է թէ ոչ: Ձէ՞որ դեռ պէտք է պատրաստուել. հօ չէ կարելի հէնց այսպէս վեր կենալ ու գնալ. մենք քիչ հոգի չենք, և պատրաստուելու համար բաւական ժամանակ է հարկաւոր. չորս հոգի հէնց միայն դուք երեխաներդ էք, դեռ տանն էլ ամեն բան պէտք է տեղաւորել, որ ցեցերն ու մկները չփչացնեն:

—Ա՛խ, դայեակ, ուրեմն դեռ կըպատես մեզ այստեղ: Խնդրում ենք, սիրելի դայեակ, չուտով տեղաւորես ամեն բան, մենք էլ քեզ կօգնենք, ասացին երեխաները:

—Է՛հ, բանը որ ձեր օգնելուն ծնայ, մենք մի ամսուայ էլ չենք կարող վերջացնել. օգնել էլի կարող է Հեղինէն, իսկ միւսներդ բացի խանդարելուց ոչինչ չէք կարող չինել, պատասխանեց դայեակը:

—Իսկ դու ի՞նչպէս ես կարծում, երեք օրում մենք կարո՞ղ ենք բոլորը վերջացնել, հարցրեց մայրը դայեակին:

—Այո՛, կարելի է, եթէ միայն երեխաները չխանգարեն մեզ:

—Գիտէ՞ք՝ ինչ կայ, ասաց մայրը երեխաներին. այսօր երկուշաբթի է, եթէ դուք մեզ չխանգարէք, յոյս ունիմ, որ մենք հինգշաբթի կըկարողանանք ճանապարհ ընկնել:

Երեխաները խօսք տուին, որ չեն խանգարի և գնացին մանկանոց իրանց իրերը հաւաքելու:

Նրանցից ամեն մէկը ունէր մի փոքրիկ արկղ և կարող էր խաղալիքներ վերցնել, որքան տեղաւորուէր արկղի մէջ:

Աբրամը, Հեղինէն, Սաթենիկն ու Սուրէնը ամեն տարի իրանց հօր ու մօր հետ ամառն անց էին կացնում գիւղում և միշտ մեծ անհամբերութեամբ սպասում էին գիւղ գնալուն: Նրանք

քաղաքում էլ լաւ էին ապրում, բայց գիւղում, աղատ օդում նրանց կեանքը աւելի ուրախ էր անցնում:

Մեծը—Աբրամը՝ արդէն տասը տարեկան էր, իսկ Հեղինէն իննը: Նրանք երկուսն էլ վաղուց ուսումնարան էին գնում և կարդալու մեծ սէր ունէին. հէնց դրա համար էլ ուզում էին որքան կարելի է շատ գիրք տանել գիւղ. դասագրքերի մասին չէին էլ մտածում, գիտէին որ մայրիկն այդ մասին կըհոգայ. իսկ ամէն օրերին նաւէր ստացած գեղեցիկ գրքերից կարող էին վերցնել այնքան, որքան կըտեղաւորուէր իրանց անդուխներում: Բացի դրանից Աբրամը կամենում էր անպատճառ վերցնել իւր ներկերը և այն բոլոր բաները, ինչ որ հարկաւոր էր թղթից արկներ չինելու համար, իսկ Հեղինէն՝ իւր սիրելի տիկնիկը և նրա ամբողջ բաժինքը: Նա ուրախութեամբ կըվերցնէր և տիկնիկի մահճակալը, բայց այդ մասին մտածելն անգամ աւելորդ էր, որովհետև եթէ այդպէս անէր, էլ ոչ մի գիրք դնելու տեղ չէր մնայ: Մէկ էլ որ Աբրամը մխիթարում էր Հեղինէին, խոստանալով գիւղում անճարև օրերին հատ թղթից ախոռներ և ահաղան չինել նրա տիկնիկի համար. իսկ քնել նա կարող էր և բադիկոռի վրայ:

Այժմ Աբրամի և Հեղինէի համար ամենամեծ հոգսը գրքեր ընտրելն էր. ո՛րը վերցնէին և ո՛րը

թողնէին: Նրանք բոլորն էլ կըտանէին իրանց հետ, բայց դա անկարելի էր—տեղ չկար. ուզէին չուզէին՝ պէտք է ընտրութիւն անէին: Սրա վրայ նրանք երկար ժամանակ գործ ունէին, բայց հէնց որ այդ դժուար ընտրութիւնը վերջացաւ, բանը հեշտացաւ. չուտով ամեն բան խնամքով տեղաւորեցին անդուխների մէջ և փակեցին:

Բայց այնքան հեշտ չէր առաջ գնում եօթը տարեկան Սուրէնի և հինգ տարեկան Սաթենիկի գործը, և եթէ Հեղինէն չօգնէր, ո՞վ գիտէ՝ նրանք երբէք չկարողանային իրանց բաները տեղաւորել ու վերջացնել:

Հեղինէն շատ ժիր աղջիկ էր և ոչ միայն ձեռք էր հասցնում փոքրիկ եղբօրն ու քրոջը, այլ և մի լաւ օգնական էր մօրն և դայեակի համար:

Մայրը և դայեակը մեծ եռանդով էին պատրաստութիւն տեսնում, այնպէս որ երկու օրում բոլոր գործը վերջացած էր: Շաբաթ օրը դայեակը գիւղ գնաց, որ այնտեղ էլ ամեն բան կարգի բերէ՝ մինչև ամբողջ ընտանիքի գալը:

Հինգշաբթի, առաւօտեան ժամը 6-ին, երեխաները արդէն քնից վեր էին կացել, չնայելով որ միայն ժամը 11-ին պէտք է ճանապարհ ընկնէին: Նրանց թուում էր, թէ առաւօտը սովորականից աւելի երկար է, թէ հայրիկն ու մայրիկը

ամենևին չեն չտապում, և թէ նրանք անպատճառ կուշանան երկաթուղու դնացքին. սակայն թէև երեխաների ծնողները չէին չտապում, բայց ամեն բան ժամանակին կատարուեց, վերջացաւ։

Ճիշտ ժամը 10-ին ամենքը նախաճաշեցին, իսկ 11-ին գնացին երկաթուղու կայարանը. նրանք ոչ միայն չէին ուշացել, այլ դեռ ամբողջ կէս ժամ պէտք է սպասէին գնացքի գալուն։

—Այսօր կարծես դիտմամբ ժամացույցներն էլ դանդաղ են գնում, ասում էր Սուրէնը, որ երեխաների մէջ ամենից անհամբերն էր։

—Ճիշտն ասեմ, ինչպէս երևում է, մենք այսօր ճանապարհ չենք ընկնելու և իզուր խեղճ դայեակն էլ մեզ պէտք է սպասէ. ո՞վ գիտէ՝ դուցէ մտածել էլ, թէ մի բան է պատահել, մինչդեռ ոչինչ չէ պատահել, այլ այսօր ամենքն էլ դանդաղ են չարժուում։

Բայց այդ րոպէին զանգը երրորդ անգամ հնչեց. մեքենան այնպէս սաստիկ սուլեց, որ Սաթենիկը վախից ականջները փակեց։ Գնացքը չարժուեց։

Ո՜հ, վերջապէս, ասաց Սուրէնը, այժմ կարելի է յուսալ, որ մենք այսօր գիւղ կը հասնենք։

—Այո՛, ինչպէս և միշտ, այս անգամ էլ եւթևկոյեան ժամ ը8-ին գիւղում կը լինենք։ Տես, Սուրէն, մենք ոչ մի րոպէ նշանակած ժամից ուշ չենք դուրս եկել, ասաց մայրը, նայելով ժամացոյցին։

—Անկարելի է, մայրիկ.քո ժամացոյցը այսօր երևի ետ է մնում։

—Իսկ ես ընդհակառակը կարծում եմ, որ քո անհամբերութիւնն է առաջ վազում, պատասխանեց մայրը։

Արագ գնացքը, տեսարանների փոփոխութիւնները, կայարաններում յաճախ կանգնելը, կայարանում ճաշելը—ճանապարհը շատ հետաքրքիր դարձրին երեխաների համար, այնպէս որ նրանք չնկատեցին, թէ ինչպէս օրն անցաւ։ Ահա և այն կայարանը, ուր նրանք պէտք է իջնէին։

Ամենքը դուրս եկան վագօնից։ Երեխաները հեռուից ճանաչեցին իրանց կառքը և ուղիղ վազեցին նրա մօտ։ Ուրախ-ուրախ նրանք բարևեցին կառապանին և առանց ժամանակ կորցնելու նստեցին կառքի մէջ։

Կառքով նրանք պէտք է գնային միայն կէս ժամ։ Գնում էին ծանօթ տեղերով։ Ահա հարևան գիւղը. ահա այն փոքրիկ անտառը, ուր երբեմն ամբողջ ընտանիքով գնում էին սունկ հաւաքելու, վերցնելով իրանց հետ հեչտաեդ և զանազան ուտելիքներ. ահա վերջապէս և այն բլուրը, որտեղից երևում է իրանց գիւղը։

Երեխաներն այլևս չէին կարողանում հանգիստ մնալ իրանց տեղերում. հէնց ուզում էին կառքից դուրս թռչել։ Կառապանը թե-

թև կերպով մտրակեց ձիերին և նրանք սրընթաց մօտեցան ու կանգնեցին տան առաջ։

Եթէ հայրիկն ու մայրիկը չլինէին, դեռ կառքը չկանգնած՝ երեխաները դուրս պէտք է ցատկէին նրա միջից։

Դառնը հանդիպեց դայեակը. նա այնպէս ուրախացաւ, որ կարծես թէ մի ամբողջ տարի տեսած չլինէր նրանց։ Ճիշտ է, նա երբեմն փընթփնթում էր երեխաների վրայ, բայց նրանց այնքան սաստիկ էր սիրում, որ տխրում էր՝ երբ մինչև անգամ կարճ միջոցով հեռանում էին իրանից։ Երեխաներն էլ սիրում էին իրանց պառաւ դայեակին և չէին նեղանում նրանից։

Ամենքը գնացին պատշգամբը, որ նայում էր դէպի այգին։ Այնտեղ երկար սեղանի մէկ ծայրին եռ էր գալիս հեշտաեռը. իսկ միւս ծայրին դրած էր կաւէ ամաններում թարմ կաթ, մածուն, չօռ և տանու փափուկ հաց։ Սրանք համեղ կերակուրներ էին մեր քաղցած երեխաների համար։

Երեխաները շատ էին ուզում, որ թէյից յետոյ մէկ պտըտեն ամբողջ այգին և տեսնեն իրանց ծանօթ ու սիրելի տեղերը. բայց արդէն ուշ էր, և մայրիկն ասաց, որ քնելու ժամանակ է։ Թէև երեխաներին թւում էր, թէ քնել չեն ուզում, բայց դլուխները բարձին դնելուն պէս՝ ընկան խոր ու քաղցր քնի մէջ։

ՃԳՈՒՌՆ ՈՒ ՄՐՋԻՒՆԸ

—Սիրելի՛ Սուրէն, ասաց մի անգամ Սաթենիկը, յիշո՞ւմ ես, դու խոստացել ես հայրիկի տոնի համար մի առակ սովորեցնել ինձ, այժմ հէնց լաւ ժամանակն է. տեսնո՞ւմ ես՝ ինչպէս անձրև է գալիս և դուցէ մենք դեռ երկար ճնանք տանը նստած։ Լաւ է, հայրիկն էլ տանը չէ, իսկ մայրիկը նրան ոչինչ չի ասիլ. այնպէս չէ՞, մայրիկ, դարձաւ նա մօրը, որ այնտեղ նստած աշխատում էր։

—Միամիտ կաց, աղջիկս, ես նրան ոչինչ չեմ ասիլ, պատասխանեց մայրը։

—Ես քեզ կըսովորեցնեմ «Մրջիւնի և Ճպուռի» առակը, որն ամենից լաւ գիտեմ, ասաց Սուրէնը։ Սուրէնն արդէն ձանձրացել էր տանը նստելուց և տխուր էր, ուստի ուրախացաւ, որ այսպիսի զբաղմունք կունենայ։



— Սուրէ՛ն, այդ առակը ինձ բոլորովին դուր չէ գալիս. դա այն չէ՞, որ չարասիրտ և վատ մըր-

չինը չէ ուզում օգնել գեղեցիկ պուռին, հարցրեց Սաթենիկը։

—Բայց, Սաթենիկ, եթէ քեզ դուր չէ գալիս մրջինի վարմունքը, ասաց մայրը, գոնէ հատաճայնիր, որ չէ կարելի գովել և ճպուռին, որ ամբողջ ամառը խաղով ու երգով է անց կացրել, իսկ յետոյ կամենում է ուրիշի պաշարից օգտուել։ Այդ առակը շատ լաւն է. ես խորհուրդ եմ տալիս որ սովորես։ Եթէ այսօր կէսը սովորես, այդ էլ բաւական է. իսկ յետոյ մենք կըխնդրենք ճըպուռին և մրջինին, որ մէկ մէկու պատմեն իրանց կեանքը, և դու այն ժամանակ կըտեսնես, որ մրջինը, եթէ մինչև անգամ կամենար էլ, չէր կարող օգնել ճպուռին։

Սաթենիկը շատ էր սիրում լսել, երբ մայրը պատմում էր մի որևէ բան. և այդ պատճառով խնդրեց Սուրէնին, որ նա որքան կարելի է շուտով սովորեցնէ առակը։

Փոքրիկ Սաթենիկը սուր յիշողութիւն ունէր և չուտով սովորեց առակի կէսը. այնքան չուտ սովորեց, որ նրա չափից դուրս անհամբեր ուսուցիչն էլ զոհ մնաց։

Երբ այս զբաղմունքը վերջացաւ, նրանք իջան վազեցին մայրիկի սենեակը և նստեցին նրա մօտ իրանց փոքրիկ աթոռների վրայ։ Արամն ու Հեղինէն նոյնպէս սիրում էին լսել, երբ մայրիկը պատմում էր։

Երբ ամենքը կարգին նստոտեցին, մայրիկն այսպէս սկսեց իւր պատմութիւնը։

Գեղեցիկ ճպուռը, բայց ոչ ուստոստոզ ճպուռը (որովհետև իսկական ճպուռները չեն ուստոստում, այլ թռչում են), ճախրում էր լճակի վրայ. յանկարծ նա մի մեծ ճանճ տեսաւ, ընկաւ նրա ետևից, չուտով հասաւ, բռնեց թռչելիս և թռչելիս էլ կերաւ. ապա նստեց մի վայրկեան հանգստանալու կանաչ տերևի վրայ։ Ճպուռները մի տեղ երկար նստել չեն սիրում, և ահա մեր գեղեցիկ ճպուռը պատրաստւում էր նորից թռչել դէպի իւր սիրելի լիճը, բայց յանկարծ ներքևում տեսաւ մի փոքրիկ սև մրջիւն. նա քարշ էր տալիս մի փայտի կտոր, որ իրանից հինգ անգամ մեծ էր։ Բեռը շատ ծանր էր. մրջիւնը յաճախ կանգնում էր, մի փոքր հանգստանում և կրկին չարունակում իւր գործը։

—Սանահա՛յր, խօսեց ճպուռը, ի՞նչ ես այդքան աշխատում, մի՞թէ քեզ համար հաճելի բան է մի այդպիսի ծանրութիւն կրել և ի՞նչպէս չես ձանձրանում. ես չեմ կարողանում առանց խաղահարուելու նայել քեզ։

— Ճշմարիտ է, բեռս ծանր է, պատասխանեց մրջիւնը, լաւ կլինէր, եթէ ընկերներիցս մէկը այժմ պատահէր. նա ինձ կօգնէր։ Բայց եթէ ընկեր չլինի էլ՝ դոգ չէ, ես մի կերպ մենակ տեղ կրհասցնեմ, ափսոս է մի այսպիսի գերան

ձեռքից թողնել, իսկ ես սովոր եմ աշխատանքի և երբեք չեմ ձանձրանում: Այս ասելով մըր-ջիւնը էլի մի փոքր առաջ տարաւ իւր բեռը:

—Ես զարմանում եմ, ի՞նչ խելք է, որ դուք մրջիւններդ այդքան աշխատում է՛ք, կարծես վատ եղանակին չէ կարելի պատսպարուել մի տերևի տակ. տեսնո՞ւմ ես, այստեղ որքան տերևներ կան:

—Իսկ ձմե՞ռը, հարցեց մրջիւնը:

—Ձմե՞ռը, մինչև ձմեռը ես չեմ ապրիլ:

—Իսկ ես յոյս ունիմ, որ ձմեռն էլ կենդանի կըլինիմ և ահա, տաք անկիւնի հոգս եմ քաշում: Բացի դրանից հէնց ամառն էլ մեր ձագերը չեն դիմանում խոնաւ եղանակին և դիւրևլու դրտին:

—Ինչպէս տեսնում եմ, դուք մրջիւններդ բոլորովին այնպէս չէք ապրում, ինչպէս մենք ճպուռները: Արի պատմենք միմեանց մեր կեանքը. թէև ես չեմ սիրում մի տեղ երկար նստել, բայց այս անգամ ինչ էլ լինի, կըհամբերեմ:

—Լա՛ւ, պատասխանեց մրջիւնը, մինչև այդ ժամանակը ես էլ մի փոքր կըհանգստանամ. դէ՛, սկսիր, ես լսում եմ:

Ճպուռը թրթռաց, պտոյտներ արաւ օդի մէջ և թևերն ուղղելով՝ նորից նստեց տերևի վրայ և պատմեց հետևեալը:

—Ես միշտ այսպէս չեմ եղել, ինչպէս այժմ

դու ինձ տեսնում ես: Ես առաջ չէի թռչում օդում, կար ժամանակ երբ ես ապրում էի, ա՛յ, տեսնում ես, այն ձի յատակին. գուցէ հէնց այդ է պատճառը, որ ես այսչափ սիրում եմ ջուրը և երբէք չեմ հեռանում նրանից: Եթէ երբեմն ճանճի կամ թիթեռի ետևից ընկնելով՝ ես ստորականից աւելի հեռու եմ թռչում, այն ժամանակ դարձեալ աշխատում եմ չուտով վերադառնալ ձի մօտ: Միայն այնտեղ եմ կարողանում ազատ շունչ քաշել: Զգիտեմ ի՞նչ է պատճառը, բայց ես ծնուել եմ ջրի մէջ. պէտք է կարծել, որ ես դուրս եմ եկել ձուից, որովհետև յետոյ ես տեսել եմ, թէ ի՛նչպէս իմ փոքրիկ ազգականները դուրս էին գալիս ձուերից: Երբ ես դեռ ջրամոյ էի ապրում, մարմնիս կէսը թէև չատ նման էր այժմեանին, սակայն ես այսչափ գեղեցիկ չէի, այն ժամանակ ես չունէի այս սիրուն թևերը: Ձեմ հասկանում, թէ ի՞նչպէս էի կարողանում ապրել, ամբողջապէս թաղուած լինելով տղմի մէջ, առանց լոյսի և օդի: Բայց պէտք է ասեմ, որ այն ժամանակ ես արեգակի պէտք չէի զգում և գոհ էի իմ վիճակից: Այն ժամանակ ես այժմեանից վատ չէի որս անում և այդ գործը կատարում էի բոլորովին ուրիշ ձևով: Թաղուում էի տղմի մէջ և սպասում որսի գալուն. հէնց որ հեռուից տեսնում էի մի որևէ որդ կամ փոքրիկ ձուկ, իսկոյն կամաց-կամաց ո-

ղում էի դէպի նրան, ձգում երկար չրթունքս, որ այժմ շատ կարճ է. այն ժամանակ նա ինձ շատ էր օգնում, շատ անգամ կարծես թէ որսս ձեռքով բռնում էի և ուղիղ բերանս տանում: Այսպէս ճաշում էի ու հանգիստ նստում, մինչև որ նորից քաղց զգայի: Ջրի մէջ ապրելիս էլ իմ կեանքը ի հարկէ բոլորովին ապահով չէր. փորը ի շատէ մեծ ձկները ամեն րոպէ պատրաստ էին ինձ կուլ տալու. նոյն իսկ իմ քոյրերը, որ ինձ նման թրթռուր էին, կամենում էին ինձ ուտել, բայց, ինչպէս տեսնում ես, ինձ յաջողուեց խոյս տալ բոլոր վտանգներից: Կարճ միջոցից յետոյ հարմնեակ դարձայ, այդ ժամանակ սկսեցին երևալ և իմ հրաշալի թևերը: Մի քիչ ժամանակ էլ ապրելով ջրի մէջ՝ վերջապէս մի գեղեցիկ օր ցանկացայ ազատ օդ շնչել. մօտեցայ մի ջրային բոյսի, նրա վրայով կամաց-կամաց սողացի մինչև ջրի երեսը, այնտեղից էլի դէպի վեր, յետոյ պինդ կպայ մի տերևից և կախուեցի գլխիվայր: Մի առ ժամանակ այդպէս մնալուց յետոյ իմ վերևի մաշկը չորացաւ, ամրացաւ և վերջապէս ճաքուեց. ես գլուխս հանեցի իմ բանտից: Ո՜հ, որչափ գեղեցիկ երևաց ինձ Աստուծոյ աշխարհը: Կամաց-կամաց ազատուելով իմ կապանքներից՝ ես վերջապէս դուրս եկայ և գարձայ մի այսպիսի գեղեցիկ միջատ, ինչպէս տեսնում ես ինձ այժմ:

Ես սաստիկ ցանկանում էի թռչել օդում, բայց իմ թևերս ու ոտներս դեռ շատ թոյլ էին: Մի քանի ժամից յետոյ իմ կազմուածքը բոլորովին ամրապնդուեց և ես թռայ տերևից: Այդ րոպէից սկսուեց իմ ուրախ և անհոգ կեանքը: Թռչկոտում եմ ես իմ հայրենի լճի վրայ. քաղցած երբէք չեմ մնում,—չէ՞որ ես էլ ճարպիկ որսորդ եմ, իսկ ինձ համար այստեղ բաւականաչափ ճանճ և թիթեռ կայ: Կան ի հարկէ և թռչուններ, որոնք ուրախութեամբ կուլ կըտային ինձ. մինչև անգամ մարդիկ էլ գրաւուելով իմ գեղեցկութիւնից՝ երբեմն ուրախութեամբ կըբռնէին ինձ, բայց ես ճարպիկ եմ և ինձ բռնելը հեշտ չէ:

Ահա իմ ամբողջ կեանքը: Այժմ պատմիր քո կեանքը, ասաց ճպուռը և լռեց:

—Իմ կեանքը բոլորովին նման չէ քոնին, պատասխանեց մրջիւնը: Ճշմարիտ է, մենք մրջիւններս էլ դուրս ենք գալիս ձուից, բայց այնպիսի մանր ձուաններից, որ աչքով հազիւ կարելի է տեսնել: Հէնց որ մայր-մրջիւնը ձու է ածում, իսկոյն դայեակը վերցնում է այդ ձուանները և տանում մրջնանոցի խորքի սենեակներից մէկը: Այդ սենեակներում սովորաբար շատ ու շատ են լինում այդպիսի մանր ձուաններ: Մեր դայեակները չարունակ զբաղուած են այդ ձուաններով.

Հ. Ս. Խ. Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
S.S.R.A. Публичная Библиотека
7/XI—1922
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

նրանք ձուն թրջում են իրանց բերանում և նո-
րից դնում տեղը:

Տատն և հինգ օրից յետոյ, ինչպէս դայեակս
ինձ պատմեց, ես դուրս եկայ ձուից. այն ժա-
մանակ ես էլ քեզ պէս թրթուր էի: Միայն
գլուխս կար և մարմինս առանց ոտների: Ես,
ինչպէս և իմ բազմաթիւ եղբայրներս, կըմեռ-
նէի քաղցից ու ցրտից, եթէ չլինէին մեր դա-
յեակները, որոնք կերակրում էին մեզ իրանց բե-
րանի քաղցր հիւթով և առհասարակ քնքշու-
թեամբ խնամում էին մեզ. օրինակ՝ նրանք մա-
քրում էին, լիզում ու տրորում մեր մարմինը.
մեզ տանում էին դնում արևի տակ և կրկին
տանում մրջնանոցը. գիշերները և վատ եղանա-
կին մեզ բոլորիս տանում էին մրջնանոցի ներ-
քին յարկերը, որտեղ և տաք է լինում, և ա-
պահով:

Պէտք է ասել, որ մեր մրջնանոցում կան
շատ յարկեր, որոնք ունին բազմաթիւ անցքեր,
մուտքեր և պանապան սենեակներ: Մեր մանկա-
նոցները և մեր մայրերի սենեակները գտնւում
են մրջնանոցի ամենաապահով տեղում և նրա
ամենից յարմար սենեակներն են: Մրջնանոցի
մէջտեղը գտնւում է մի մեծ դահլիճ, ուր
հաւաքւում են բոլոր մրջիւնները: Կան և դռներ
մեր կովերի համար:

—Ի՞նչպէս թէ դռներ կովերի համար, դուք
ի՞նչպէս կարող էք կովեր ունենալ, ճչաց ճպուռը:

—Ես ոչինչ չեմ հնարում և պատմում եմ
այն, ինչ որ ճիշտ է: Դու անտարակոյս տեսած
կըլինիս բոյսերի վրայ մի տեսակ մանր կանաչ մի-
ջատներ, որոնց խոտի ոջիլ են անուանում մարդիկ:
Այդ միջատները իրանցից դուրս են թողնում մի
տեսակ քաղցր հիւթ, որ մեր սիրելի կերակուրն
է: Մենք մեր բեխերով դրգռում ենք այդ մի-
ջատների մարմինը, որով ստիպում ենք դուրս
թողնել այդ հիւթը: Երբ մենք ուտում՝ կշտանում
ենք, մեր երեխաների համար էլ փոքրիկ պա-
շար ենք վերցնում: Իսկ երբ տեսնում ենք
մի բոյս՝ ոջիլներով ծածկուած, իսկոյն բարձրա-
նում ենք նրա վրայ, ուտում՝ կշտանում ենք նրանց
հիւթով. այդ դեռ բաւական չէ, մենք յաճախ
նրանց մեծ քանակութեամբ քշում ենք մեր մըր-
ջնանոցը: Մենք նրանց պահպանում ենք, կերա-
կրում ենք, իսկ պէտք եղած ժամանակն էլ կը-
թռում: Մենք շատ սիրով ենք վարւում մեր կո-
վերի հետ: Նրանք էլ մեզ մօտ վատ չեն ապրում:

Չնորհիւ իմ դայեակի հոգածութեան՝ ես
անվտանգ անց կացրի այն միջոցը, երբ դեռ թըր-
թուր էի. վերջապէս ես փաթաթուեցայ սպիտակ
մետաքսանման խանձարուրով և հարսնեակ դար-
ձայ: Մարդիկ բոլորովին սխալւում են՝ մեր հարս-
նեակներին մրջիւնի ձուաներ անուանելով. ինչ-

պէս արդէն ասացի, մրջինի ձուաներն այն աս-
տիճան փոքր են, որ հազիւ են տեսնւում:

Դայեակս չարունակում էր ինձ սնուցանել և տեղափոխել մի տեղից միւս տեղ, երբ և ուր որ այդ յարմար և անհրաժեշտ էր ինձ համար: Փոքր առ փոքր իմ խանձարուրս ստանում էր մուգ գոյն, և վերջապէս դայեակս նկատեց, որ ժամանակ է ինձ իմ բանտից դուրս գալու: Այս դէպքում էլ նա ինձ օգնեց. ես պատառեցի խանձարուրս և դուրս եկայ նրա միջից: Դեռ էլի երկար ժամանակ դայեակս ինձ մենակ չէր թողնում. ես երբէք առանց նրան դուրս չէի գալիս մրջնանոցից, երբէք նա ինձ չէր հեռացնում իւր աչքից, օգնութեան էր հասնում ամենափոքր վտանգի ժամանակ և այս բոլորը նա կատարում էր սիրով, մինչև որ ամրապնդուեցայ և սովորեցի այն ամենը, ինչ որ պէտք է իմանայ ամեն մի բարեկիրթ բանուոր մրջիւն: Այն ժամանակ ես սկսեցի մեծերի հետ միասին աշխատել:

Ինձ համար մեծ ուրախութիւն էր մեր բազմաթիւ ընտանիքի հետ միասին աշխատել, և ոչ մի գործ ինձ դժուար չէր թւում: Երբեմն այնքան եռանդով էի գործի կպչում, որ մինչև անգամ մոռանում էի ճաշել. իսկ երբ դեռ գործս չվերջացրած քաղցում էի՝ կանգնեցնում էի առաջին պատահած ընկերիս և նա

ուրախութեամբ կերակրում էր ինձ: Պէտք է ասեմ, որ ես էլ միշտ օգնել եմ իմ ընկերներիս:

Մի անգամ մի քանի մրջիւններ գնացինք խոտի ոջիլներ ճարելու. գտանք մի բոյս, որ ծածկուած էր մեր կովերով. բաձրացանք նրա վրայ և սկսեցինք կթել: Յանկարծ սաստիկ քամի բարձրացաւ և համարեա թէ մեզ բոլորիս ներքև թափեց: Այդ դեռ մեծ դժբախտութիւն չէր լինիլ, բայց նոր անձրև էր եկել, ներքևը ամբողջ լճակ էր գոյացել, և մենք բոլորս թափուեցինք այդ ջրի մէջ: Բարեբախտաբար ես ափին բաւական մօտիկ էի ընկել, ուստի կարողացայ չուտով ցամաք դուրս գալ: Բայց իմ ընկերներս խեղդւում էին. ես մենակ անկարող էի նրանց ազատել. չտապով վազեցի մեր մրջնանոցը և օգնութեան կանչեցի: Մեր մրջիւնները իսկոյն հետևեցին ինձ: Հասնելով լճին՝ քաջութեամբ սկսեցինք լող տալ և դուրս հանեցինք մեր բոլոր ընկերներին: Ախ, որ իմանաս՝ ի՜նչ խղճալի վիճակի մէջ էին նրանք:

Մենք սկսեցինք նրանց մէկ կողքից միւսի վրայ չուռ տալ: Երկար զբաղուեցինք նրանցով և մեր ջանքը իզուր չանցաւ. մեզ յաջողուեց մի քանիսին ուշքի բերել: Մնացածները, չնայելով մեր գործ դրած ջանքին՝ չէին չարժվում. ինչպէս երևում էր, ուշ էր հասել մեր օգնութիւնը. նրանք մեռած էին: Ի՞նչ պէտք է անէինք.

մենք նախ մրջնանոց տարանք այն հիւանդնե-
րին, որոնք մեր խնամքով առողջացել էին, յետոյ
վերադարձանք մեռածներին տանելու: Մենք
չենք սիրում այնպէս թափած թողնել մեր մե-
ռած եղբայրներին, որ կերակուր դառնան ա-
ձալին պատահած կենդանուն:

Շատ երկար կլինէր, եթէ պատմէի այն բո-
լոր դժբախտութիւնները, որ պատահում էին
մեզ հետ, երբ մենք գնում էինք աշխատելու: Ամեն
օր մեծ թուով կորուստ է կրում մեր ադգին
ընտանիքը. դեռ լաւ է, որ երկար ցաւելու և
վշտանալու ժամանակ չունինք. չափազանց շատ
են մեր հոգսերն ու զբաղումները. նորածին երե-
խաներին խնամելը, կերակուր ճարելը և մրջնա-
նոցն ընդարձակելը մեզնից խլում են համարեա
մեր բոլոր ժամանակը:

Այժմ պատմեմ քեզ այն փորձանքների մա-
սին, որ եկել են մեր մրջնանոցի դլխին:

Այն մրջնանոցը, որի մէջ ես ծնուել եմ, շատ
յարմար կերպով տեղաւորուած էր մի գեղեցիկ
ոսենու արմանների մօտ: Ծառի բունը գոնէ մի
կողմից պահպանում էր մեր բնակարանը ամեն
տեսակ թշնամիներից:

Մենք ազատ ու երջանիկ էինք ապրում նրա
մէջ: Սակայն մի դժբախտ օր մեր անտառը մի
քանի մարդիկ եկան՝ կացիններով ձեռին: Նրանց
դուր եկաւ մեր ոսենին: Առանց երկար մտա-

ծելու՝ նրանք գործի կպան: Հնչեց կացնի ձայ-
նը, սղոցը սրսռաց և մեր ոսենին ճարճատեց:
Սարսափելի իրարանցում ընկաւ մեր մրջնա-
նոցի մէջ: Մեր գլխաւոր հոգսն եղաւ ազատել
թրթուրներին և հարսնեակներին: Սակայն մենք
դեռ մեր անելիքը չէինք վճռել, երբ յանկարծ
մեր մայրենի ծառը շարժուեց և սարսափելի
թնդիւնով ընկաւ մեր տան վրայ ու հիմնայա-
տակ արեց: Քանի՛ քանիսը վիրաւորուեցան: Ո՜հ,
դառն էր մեր վիճակը: Բայց լացի ժամանակ
չէր, հարկաւոր էր ազատուելու մասին մտածել:
Վերցրինք մեր մայրերին, թրթուրներին և
հարսնեակներին, չմոռացանք նաև մեր վիրաւոր
ընկերներին և ամբողջ ընտանիքով ճանապարհ
ընկանք բնակութեան համար նոր տեղ որոնելու:

Մեր քոչը մի երկար չղթայ կազմեց ճանապար-
հի վրայ: Այն մրջիւնները, որոնք առաջնորդում էին
մեզ, վազում էին յետին կարգերը և հաղորդում, թէ
ինչ արգելքներ են սպասում մեզ: Վերջապէս
մենք հասանք մի տեղ, որ շատ հաւանեցինք:
Դա մի փոքրիկ մարգագետին էր՝ շրջապա-
տուած թփերով: Մեր աչքը վախեցել էր և այժմ
մենք չէինք ուզում բնակութիւն հաստատել մեծ
ծառերի մօտ: Թփերի ճղների վրայ մենք տեսանք
մեր սիրելի կովերի ամբողջ հօտեր: Այդ հանգա-
մանքը աւելիևս ստիպեց մեզ այս տեղն ընտ-
րել մեր մրջնանոցի համար: Մենք իսկոյն գործի

կպանք, առանց մի վայկեան անգամ կորցնելու։ Ամենից առաջ սկսեցինք հողի մէջ անցքեր ու սենեակները փորել, իսկ փորած հողով վերևից ծածկեցինք մեր տունը։

Մենք այնպէս եռանդով էինք աշխատում, որ արդէն չուտով չինել՝ վերջացրել էինք մեզ համար մի բաւական յարմար բնակարան։ Այս անգամ էլ, ինչպէս և միշտ, մեր առաջին հոգսն եղաւ որքան կարելի է յարմար տեղ տեղաւորել մեր մայրերին և նրանց փոքր երեխաներին։ Մենք չուտով ընտելացանք մեր նոր բնակարանին։ Նա ոչ մի բանով վատ չէր մեր առաջուայ մրջնանոցից։ Մենք ուրախութեամբ աշխատում էինք և չարունակ ընդարձակում և ամրացնում մեր տունը։ Դարձեալ սկսուեց մեր երջանիկ կեանքը։

Բայց մի օր յանկարծ մեր դէնապանները (պէտք է ասեմ քեզ, որ մեր բոլոր մուտքերի մօտ պահապան մրջիւններ են կանգնած) ներս մտան մրջնանոցը և սարսափելի աղմուկ ու շփոթ բարձրացրին, դիպչելով ամեն մէկին իրանց բեխերով. նրանք յայտնեցին, որ մեզ վրայ գալիս է չէկ մրջիւնների մի ամբողջ զօրք։ Մենք ամենքս իրար անցանք։ Որը տանում էր մայրերին և երեխաներին գաղտնի անցքերը, որ մենք չինում ենք վտանգի ժամանակ պաշտպանուելու համար. որը մուտքերն էր ամրացնում. որը կըռ-

ուի պատրաստուում։ Թշնամու յարձակուելն անսպասելի էր, բայց և այնպէս մենք էլ կարողացանք ժամանակին պաշտպանուել. այնպէս քաջութեամբ դիմադրեցինք, որ այս անգամ թշնամուն ստիպեցինք ետ քաշուել։

Հէնց որ մեր թշնամիները հեռացան, մենք չտապեցինք թաղել մեր մեռած ընկերներին և օգնել վիրաւորներին. հանգստանալու մասին մըտածելու ժամանակ էլ չունեցանք։ Հարկաւոր էր կարկատել մրջնանոցի փչացած տեղերը, ամրացնել մուտքերը, մի խօսքով՝ ամեն տեսակ միջոցներ ձեռք առնել դիմադրելու մի նոր յարձակման, եթէ տեղի ունենար։ Մենք գիտէինք, որ չէկ մրջիւնները մեզնից չուտով ձեռք չեն քաշելու։

Յերաւի, միւս օրը, վաղ առաւօտեան մեր պահապանները նկատեցին թշնամու մօտենալը։ Այս անգամ նրանց թիւը չատ ու չատ աւելի էր, քան նախընթաց օրը։ Մենք վճռեցինք քաջութեամբ պաշտպանուել, սակայն ի՞նչ կարող էինք անել այդպիսի անհամար զօրքի դէմ։ Բացի այդ՝ չէկ մրջիւնները մեզնից աւելի ուժեղ են ու քաջ։ Զնայելով, որ մենք մեր բոլոր ուժերը քաջութեամբ պաշտպանում էինք, այնուամենայնիւ թշնամին ներս խուժեց մեր ամրոցը. մեզ մնում էր միայն փախչել։ Մեզնից ամեն մէկը՝ փախչելիս՝ տանում էր իւր հետ կամ

մի երեխայ կամ մի մայր և կամ մի վի-
րաւոր ընկեր. սա շատ դժուարացնում էր մեր
փախուստը. այդ պատճառով էլ թշնամին մեզ-
նից չատերին, նրանց թուում և ինձ, բռնեց ու
ստիպեց ճնալ մրջնանոցում և այն օրից մեզ
ստիպեցին աշխատել իրանց համար. մենք նը-
րանց համար կարկատում և ընդարձակում ենք
մրջնանոցը, կերակուր ճարում և նայում նրանց
երեխաներին: Հէնց այժմ էլ մենք նրանց ստրուկ-
ներն ենք, բայց ապրում ենք հաչտ. ես ու իմ
ընկերները արդէն վաղուց ընտելացել ենք մեր
այս նոր կեանքին: Մեր տէրերը մեզ հետ լաւ
են վարուում. նրանք մեզնից պահանջում են մի-
այն աշխատանք, իսկ մենք առանց այդ էլ սո-
վոր ենք աշխատանքին: Նրանք մեր գործերի
մէջ չեն խառնուում, բայց պաշտպանում են ա-
մեն տեսակ թշնամիներից: Երբեմն նրանք ար-
շաւանք են գործում նոր կողոպուտ անելու նպա-
տակով: Նրանք իրանց հետ բերում են մրջնի
թրթուրներ, հարսնեակներ և գերիներ մեզ օգ-
նելու համար: Մենք առհասարակ չատ ենք ըն-
տելանում մեր նոր ընկերներին: Երբ մեր
տէրերը վերադառնում են լաւ կողոպուտով,
մենք նրանց պատուով ենք դիմաւորում. իսկոյն
ներս ենք թողնում մրջնանոցը, կերակրում նը-
րանց, փաղաքշում և հոգ տանում վիրաւորների
վրայ: Իսկ երբ դատարկ են վերադառնում,

այդ մեզ դուր չէ գալիս և չենք թողնում, որ
իսկոյն տուն մտնեն:

Մենք աշխատում ենք, իսկ նրանք պատե-
րազմում. թող մեզնից իւրաքանչիւրը լաւ կա-
տարէ իւր գործը:

Սակայն ես չափից դուրս խօսեցի, տունս
դեռ չատ հեռու է և բեռս էլ ծանր: Բայց ա-
հա իմ բախտից մի քանի ընկերներ են գալիս,
նրանցից մէկն ու մէկը ինձ անպատճառ կօգնէ»:
Եւ մեր մրջիւնը վազեց դէպի ընկերները, նրանցից
մէկին չօշափեց իւր բեխերով և նա իսկոյն գը-
նաց մրջիւնի եանիից: Նրանք երկաւոով սկսե-
ցին քաշ տալ այն տաշեղի կտորը, որ նրանց
թուում էր մի անապին գերան:

Ճպուռը նայեց նրանց եանիից, ապա բաց
արեց իւր թևերն ու թռաւ դէպի իւր լիճը:

—Մայրի՛կ, միթէ դա ճշմարիտ բան է, ինչ
որ պատմեց մրջիւնը, թէ դու մեզ համար չա-
րաչարեցիր:

—Ո՛չ Սաֆենիկ, սա հնարովի բան չէ:
Մրջիւնը, ի հարկէ, չէ կարող ճպուռի հետ խո-
սել. մինչև անգամ եթէ խօսել էլ կարողանար,
նա այդքան ժամանակ չէր կորցնիլ պատմելու
վրայ, ճպուռն էլ այդքան երկար ժամանակ
տիտիկ չէր անիլ միևնոյն տեղը. սակայն ինչ
որ ես պատմեցի նրանց կեանքից՝ զուտ ճշմար-
տութիւն է: Կան մարդիկ, որոնք ուսումնասիրել

են մրջիւնների կեանքը, նրանք էլ նկարագրել են այս ամենը, ինչ որ ես ձեզ պատմեցի։

Ա Յ Ֆ Ի

Մի ւս օրը առաւօտեան երեխաները չատ վաղ զարթեցին։ Նրանք, աչքերը քաց անելուն պէս, հէնց որ տեսան թէ իրանք դիւղումն են, իսկոյն վեր կացան և մի ակնթարթում լուացուեցին և հագնուեցին։

Առաջին գործն այն եղաւ, որ վազեցին այգին։ Պատչգամբի մօտ սպասում էր նրանց Սիմէօնը, ծեր այգեպանը։

Սիմէօնը այգեպան էր դեռ երեխաների պապի ժամանակից, իսկ նրանց հօրը քիչ չէր մնացել իւր կռնների վերայ։ Ծերունին սիրում էր պատմել անցած ժամանակից, իսկ երեխաները սիրում էին լսել։ Երեխաները չատ զարմանում էին, որ իրանց հայրը երբեմն եղել է իրանց պէս փոքր, մինչև անգամ աւելի ևս փոքր, ինչպէս պատմում է Սիմէօնը, որ նա էլ իրանց պէս վազվզել է այս այգում և որ Սիմէօնը մանե է ածել նրան իւր կռնների վրայ։

Արամին, Հեղինէին, Սուրէնին և Սաթենիկին ծերունին ճանաչում էր նրանց ծնուած օրից և չատ սիրում էր ամենքին։ Սիմէօնի հա-

մար աչխարհիս երեսին միայն երկու բաւականութիւն կար. առաջին՝ ծաղիկները ցանել և հոգ տանել նրանց վրայ, երկրորդ՝ փայփայել երեխաներին։ Երեխաները էլ պակաս չէին սիրում նրան։

Այժմ երբ տեսան ծերունուն, չորսը միասին ուրախութիւնից ընկան նրա վրայ, սկսեցին համբուրել և քիչ էր մնում, որ վեր ձգեն խեղճ ծերունուն։

— Հը՛, ի՞նչպէս են մեր պարտէզները, հարցրին ծերունի այգեպանին։

— Եկէ՛ք, տանեմ, և կըտեսնէք, պատասխանեց Սիմէօնը։

Երեխաները առաջ վազեցին, իսկ ծերունին հապիւ էր կարողանում նրանց հետից հասնել։

Սիմէօնը երեխաներից ամեն մէկի համար, նրա ծնուած տարին, այգում խնձորի մի-մի սերմ էր տնկել։ Նա երեխաների տունկերին նայում էր մի առանձին սիրով։ Երեք տարուց յետոյ նա այդ տունկերը պատուաստում էր. ծեր այգեպանը կտրում էր առողջ և մեծ խնձորենուց մի բողբոջ ծառի կեղևի հետ միասին, ճեղքում էր փոքրիկ խնձորենու կեղևը, դնում էր նրա տակ բողբոջը և խոխրով պինդ կապում։ Բողբոջը բոլորովին միանում էր ծառին։ Ծառը մեծանալուց յետոյ տալիս էր այն տեսակ խնձորներ,

ինչպիսին տալիս էր այն ծառը, որից վերցրած էր բողբոջը։

Երբ Աբրամը հինգ տարեկան դարձաւ, Սիմէօնը այգում մի փոքրիկ տեղ ցանկով պատեց և նրա խնձորենին տեղափոխեց այնտեղ։ Նոյնն էր անում և միւս խնձորենիների հետ, հէնց որ երեխաներից ամեն մէկը հինգ տարեկան էր դառնում։ Յետոյ նա սովորեցնում էր երեխաներին, թէ ինչպէս պէտք է պահպանել ծառը, ծաղիկները և պտուղները, որ նա ցանում ու տնկում էր երեխաների հետ միասին։

Աբրամը և Հեղինէն արդէն սովորել էին ամեն բան իրանք անել, և Սիմէօնը աշխատում էր նրանց «կալուածքում» միայն գարնանը, երբ դեռ երեխաները դիւղում չէին լինում. իսկ Սուբէնին դեռ պէտք էր օգնել, թէև նա չատ էր սիրում ամեն բան ինքը իւր ձեռով անել և յաճախ՝ առանց Սիմէօնից հարցնելու՝ կարգադրում էր իւր դիտցածի պէս և փչացնում ամեն բան, բայց Սիմէօնը սովորաբար ուղղում էր նրա սխալները։ Փոքրիկ Սուբէնը կամ ցանում էր անժամանակ, կամ ցանում էր դեռ և նոպատրաստ հողում, որով սերմերը ոչնչանում էին, կամ քաղը հանելիս դուրս էր գալիս և ցանած բոյսը, որով հարկաւորւում էր կամ նորից ցանել, կամ, եթէ արդէն ուշ էր, այգուց բերել ու տնկել նրա պարտիզում։ Բայց այս տարի Սուբէնը խոստացաւ, որ առանց Սիմէօնին հարցնելու ոչինչ չի անել։

Այս տարի արդէն Սաթենիկի հերթն էր իւր սեպհական պարտէզն ունենալ։ Նա այդ մասին չգիտեր և ո՛րքան ուրախացաւ, երբ իմացաւ, որ Սուբէնի պարտիզին կից ցանկով պատած տեղը, որի մէջտեղում կար մի խնձորի ծառ, իրանն էր։ Ծաղիկներ դեռ երեխաներից ոչ մէկը չունէր. իսկ նրա պարտիզի մրգերն էլ ճիշտ այնպէս էին, ինչպէս միւս երեխաներինը։ Սաթենիկը ուրախութիւնից չգիտէր՝ թէ ինչ անէ։ Նա կամ համբուրում էր ծերունի Սիմէօնին, կամ ոստոստում իւր խնձորենու չուրջը։

Երեխաներն իրանց պարտէզը մշակում էին իրանց սեպհական փոքրիկ գործիքներով. նրանք ունէին թիակ, տրմուխ, ասյլակ, ցնցուղ և այլն։

Այժմ Սաթենիկն էլ ունէր իւր գործիքները։

Երեխաներից ամեն մէկը մշակում էր իւր պարտէզը, ինչպէս ինքն էր կամենում։ Հեղինէն աւելի ծաղիկներ էր ցանում, Աբրամը — պտուղներ և բանջարեղէն, իսկ Սուբէնը դեռ և ինքն էլ չգիտէր, թէ ի՞նչ բան է աւելի սիրում և տնկում էր ու ցանում, ինչ որ պատահում էր և որքան կարողանում էր։

Երեխաներն ունէին մի սպիտակ գեղեցիկ այծ։ Ի՛նչ խելօքն էր այդ այծը, և ի՛նչպէս սիրով էր նա երեխաների հետ։ Բայց ամենից չատ

նա սիրում էր Հեղինէին,—երևի վերջինս աւելի լաւ էր փայփայում նրան։ Այծիկը հէնց որ տեսնում էր երեխաներին, իսկոյն վազում էր նրանց մօտ և ամենից առաջ մօտենում էր Հեղինէին և սկսում գլուխը քսել նրա չորերին։ Պարտիզում աշխատելիս՝ այծիկն օգնում էր երեխաներին. նրան կամ լծում էին սայլակին և նա հող էր կրում մարգերի համար, կամ լծում էին տակաւին և ջուր կրում բոյսերը ջրելու համար։ Երեխաները այծիկին կերակրում էին նրա սիրելի կերակուրներով։

Այգում այծիկին երբէք մենակ չէին թողնում, թէև նա խելօք էր, բայց սկի չէր ուզում հասկանալ, թէ ինչ որ բուսնում է այգում նրա համար չէ։ Մանաւանդ նա սիրում էր կրծոտել մատաղ տունկերը և այդ էր պատճառը, որ լուծից արձակելուն պէս՝ Սիմէօնը նրան տանում էր ու կապում մի այնպիսի տեղ, ուր նա ուզածին չափ կարողանում էր արածել, բայց չէր կարողանում ոչինչ փչացնել։

Ծերունին նոյնպէս սիրում էր այծիկին, բայց և այնպէս չէր մոռանում, որ այծիկը մի օր մի անգամից կրծոտել էր մի քանի մատաղ խընձորենիներ։

ԿԱՐՄՐԱԿԱՏԱՐՆԵՐ

Մի անգամ երեխաների հայրը ցանկացաւ փայտմորեկներ որսալ մօտիկ անտառում։ Նա հագաւ որսորդական երկար կօշիկները, կախեց գօտուց որսորդական պայուսակը, որի մէջ դնում են պարնուած թռչունները, և հրացանը դրեց ուսը։

Մայրն ու երեխաները դուրս եկան ճանապարհ դնելու մինչև այգու վերջը կամ՝ ճիշտն ասած՝ մինչև անտառը, որովհետև այգու եռեւում այլևս ոչինչ չկար, այլ սկսւում էր մի մեծ անտառ, որի միջով ճգուած էին ճանապարհները դէպի զանազան կողմեր։

Յանկարծ երեխաները տեսան մի փոքրիկ թռչուն, որ անհանգիստ կերպով պտոյտներ էր անում և խղճալի ձայնով ճչում։ Ներանք կարծեցին՝ թէ երանք վախեցրին թռչնիկին և որպէսզի հանգստացնեն՝ կանգ առան։ Բայց երեխաների հայրը իսկոյն հասկացաւ, թէ բանն ինչումն է։ Նայեց վերև և չտապով հրացանը ձեռքն առաւ։ Նա դեռ և՛ս հրացանը չէր ուզղել նպատակին, մէկ էլ տեսնես՝ յանկարծ մի ցին նետի պէս ցած սլացաւ, բռնեց խեղճ թռչնիկին, նրա հետ միասին մի քանի պտոյտներ արաւ և բարձրացաւ դէպի վեր։ Հէնց այդ րոպէին

հրացանն արձակուեց։ Գիշատիչ թռչունը բաց թողեց որսը իւր ճանկերից, թափահարեց թևերը և մի քանի վայրկեանից յետոյ վայր ընկաւ մի տասը քայլ հեռու այն տեղից, ուր կանգնած էին ամենքը։

Երեխաները մօտեցան խեղճ թռչնիկին. դա մի գեղեցիկ կարմրակատար էր. նա գտնւում էր կիսամեռ դրութեան մէջ և շուտով շունչը փչեց։ Երեխաները խղճացին գեղեցիկ թռչնիկին։ Նրանց աչքերը լցուեցան արտասուքով։

— Հաւանական է՝ որ բոյնն էլ հէնց այստեղ մօտիկ է գտնւում, ասաց մայրը, ապա թէ ոչ կարմրակատարը միևնոյն տեղում այդպէս երկար չէր պտրտուիլ. նա ընդհակառակը կաչխատէր փախչել ցինի ճանկերից։ Կարմրակատարը խելօք թռչուն է, նա յաճախ կարողանում է խաբել իւր թշնամիներին։

Յիրաւի՝ փոքր ինչ յետոյ լսուեց մի խղճալի ճիչ։ Երեխաները զգուշութեամբ սկսեցին նայել իրանց չորս կողմը և վերջապէս խոտերի մէջ տեսան մի փոքրիկ բացուածք, ուր երևում էին մի քանի փոքրիկ գլուխներ։

— Խեղճ թռչնիկները, ասաց Հեղինէն, նրանք այլ ևս մայր չունեն։ Արդեօք չէ՞ կարելի նրանց մի կերպ մեծացնել։

Բոյնը չինած էր հողի մէջ։

Մայրը զգուշութեամբ հանեց բոյնը և տուեց

Հեղինէին, որ տուն տանէ։ Վճռեցին իսկոյն վերադառնալ. յոյս ունէին, որ կարող են մեծացնել խղճուկ ձագերին։

Երեխաները չանկարծ մի ուրիշ կարմրակատար տեսան. նա ճչում էր և պտըտւում նրանց գլխին։

— Սա երևի հայրն է, ասաց մայրը. նա զբաղած է եղել կերակուր բերելու, իսկ այժմ վերադառնալով՝ տեսնում է, թէ ի՛նչ դժբախտութիւն է եկել իւր գլխին։ Ախո՜ն, որ մենք բոյնը հանեցինք հողի միջից. նա առանց մօրը կըպահէր իւր ընտանիքը։ Այժմ արդէն ուշ է, բոյնը քանդուած է և ձագուկները կըմեռնեն, եթէ թողնենք այստեղ։

Երեխաները չտապեցին տուն։ Ամբողջ ժամանակը մեծ կարմրակատարը պտըտւում էր նրանց գլխին և անդադար ճչում. նա երեխաներին ճանապարհ դրեց մինչև տուն։

Ճանապարհին նրանք փոքրիկ թռչնիկների համար կերակուրի պաշար պատրաստեցին՝ հաւաքեցին ճիճուներ և մրջիւնի հարսնեակներ։

Տուն գալուն պէս՝ երեխաները մօր խորհրդով բաց լուսամուտում մի մեծ վանդակ դրին, նրա մէջ տեղաւորեցին բոյնը, կերակուր էլ դրին վանդակի մէջ և դռնակը բաց թողին. իսկ իրանք քաշուեցին սենեակի մէկ անկիւնը և այնտեղից սկսեցին լուռ ու մունջ դիտել։

Մեծ կարմրակատարը հեռուից տեսնում էր ամեն ինչ:

Երբ ամենքը հեռացան, նա նայեց իւր չուրջը և համոզուելով՝ որ իրան վտանգ չէ սպասում, նստեց լուսամուտի եղերքին: Այդտեղ նա մի վայրկեան մնաց. թռչնիկները չարունակում էին ծլվլծալ: Մեծ թռչունը կամ այս ու այն կողմն էր նայում՝ կամ ձագուկներին: Վերջապէս նա վոտքերիկ ոստիւններ անելով՝ մօտեցաւ վանդակին, ապա մտաւ նրա մէջ և հէնց այստեղ օգտուեց պատրաստի կերակուրից. նա սկսեց ձագերին կերակրել:

Մինչ այդ՝ երեխաները չունչերը պահած նայում էին կարմրակատարների վրայ, բայց երբ թռչունը սկսեց կերակրել ձագերին, Սուրէնը քիչ մնաց, որ կեցցէ գոչէր: Լաւ էր՝ որ Հեղինէն կարողացաւ ժամանակին զգուշացնել:

—Սուս կաց, կամացուկ ասաց նա Սուրէնին, ո՞վ գիտէ՝ թռչունը վախենայ ու թռչի:

Երեխաները մի քանի րոպէ ևս կանգնեցին, յետոյ կամաց-կամաց դուրս եկան սենեակից և մեծ ուրախութիւնը:

—Միայն պէտք չէ մոռանալ և միշտ կերակուր բերել, ասաց մայրը:

—Ի՛նչ լաւ եղաւ, որ հայրիկը սպանեց անպիտան ցլին, նկատեց Սուրէնը:

—Այո՛, ես էլ շատ ուրախ եմ, ասաց մայրը. նա քիչ վնաս չէ տուել հասանոցին: Գիտէք՝ նա ո՞րքան վառիկներ է կերել. մանաւանդ ի՛նչեր չեն քաշել նրա ձեռին մեր խեղճ աղաւնիները. այդ անպիտանը ամենից շատ աղաւնիներին է սիրում: Առհասարակ աղաւնիները խելօք և զգոյշ թռչուններ են. նրանք ցինից շատ են վախենում. սակայն, դժբախտաբար, ցինն էլ վնասը չէ և միշտ հնար է գտնում աղաւնիներին խաբելու: Ցինը երբեմն բաւական երկար ժամանակ համբերութեամբ նստում է տանիքի վրայ. պէտք է տեսնել՝ թէ ինչպէս համեստ կերպարանք է ընդունում նա այդ միջոցին. կարծես թէ ուզում է ասել՝ ես ո՞րտեղից կարող եմ ձեզ վիրաւորել, միայն թէ դուք ինձ չվիրաւորէք: Իսկ երբ նրանցից մէկը մոռանում է իւր սովորական զգուշութիւնը, նա այլ ևս չէ ազատում ցինի ճանկերից: Ցինը երբեմն զիմում է ուրիշ խորամանկութեան. նա սկսում է պինդ-պինդ թըխթխկացնել աղաւնանոցը. աղաւնիները վախից դուրս են թռչում. նա էլ հէնց այդ է ուզում, մէկն ու մէկին հօ կըբռնէ:

— Մայրի՛կ, ի՞նչու հայրիկն աւելի վաղ չբռնեց ցինի հետքը և չսպանեց նրան հէնց հասանոցում, հարցրեց Սուրէնը:

—Որովհետև չէ կարելի հրացան արձակել այն տեղերում, ուր չինութիւններ կան՝ մանա-

ւանդ յարդով ծածկուած, ինչպէս՝ օրինակ՝ մեր հաւանոցն է: Մի քանի ազաւնի ու հաւ ապատելու համար նա կարող էր կրակ գցել ամբողջ հաւանոցը և անասնանոցը: Դու անշուշտ տեսար, որ երբ հայրիկդ հրացանն արձակեց, նրա միջից ծուխ դուրս եկաւ: Ձոր եղանակին բաւական է որ մի փոքրիկ կայծ ընկնի յարդի վրայ, իսկոյն հրդեհ կըպատահի: Ահա թէ ինչ է պատճառը, որ ցինը մինչև այժմ կենդանի մնաց. թէև ես էլ ափսոսում եմ, որ կերաւ խեղճ կարմրակատարին, բայց և այնպէս ուրախ եմ, որ բոլորը այսպէս պատահեց:

Ցինը սաստիկ զիշատիչ թռչուն է. նա չաբունակ քաղցած է. դրա համար էլ միշտ որսում է և ոչորի չէ խնայում:

Միայն թռչունները չեն, որ նրանից նեղւում են. նա ուտում է նաև այն բոլոր կենդանիներին, որոնց միայն կարողանում է յաղթել: Նա հանում է իրանց բոյներից փոքրիկ ակիւռներին կամ բռնում է նրանց՝ բնից դուրս. իսկ մեծերին չէ կարողանում որսալ, որովհետև ճարպիկ են և արագաշարժ: Երբ սկիւռը նկատում է թշնամուն, իսկոյն մեծ արագութեամբ ոլոր-մոլոր պտոյտներ անելով՝ բարձրանում է ծառը: Ցինը իւր մեծ-մեծ թևերով կարողանում է միայն մեծ չրջաններ անել, և այդպիսով մեր արագաշարժ սկիւռին յաջողւում է անվտանգ հասնել մինչև

ծառի գագաթը, իսկ այնտեղ արդէն ապահով է,—չատ հեշտութեամբ կարողանում է թագնուել ճիւղերի և տերևների մէջ:

Ցինը մինչև անգամ երբեմն յարձակւում է նապաստակի վրայ, իսկ բոլոր թռչունների ոխերիմ թշնամին է. այդ է պատճառը, որ նրանք բոլորն էլ ատում են ցինին: Երբեմն հաւաքւում են մի քանի թռչուններ և միասին յարձակւում են ցինի վրայ:

Ագռաւները յաճախ բռնում են ցինի հետքը: Բայց կարո՞ղ էք երևակայել, որ մեր գեղեցիկ և քաջ ծիծեռնակներն էլ երբեմն հաւաքւում են մեծ բազմութեամբ, ընկնում ցինի ետևից և այն աստիճան ձանձրացնում նրան, որ ստիպուած է լինում փախչել այդ փոքրիկ, բայց քաջ թշնամիներից:

Երեխաները օրը մի քանի անգամ գալիս էին զուարճանալու կարմրակատարների ընտանեքին նայելով: Նրանք միշտ մեծ զգուշութեամբ ներս էին մտնում, որ չլինի թէ թռչնեն թըռչունին, բայց կարմրակատարներն այլ ևս չէին վախենում, մինչև անգամ երբ երեխաները բոլորովին մօտենում էին նրանց: Սա աւելի ևս ուրախացնում էր մեր փոքրիկներին:

Բոլոր գտնելուց մի քանի օր յետոյ, Սիմէոնը մի անգամ մի ինչ-որ բան ձեռին՝ զգուշու-

թեամբ մօտենում էր երեխաներին. այս որ տե-
սան երեխաները, իսկոյն դէպի նրան վազեցին:

— Այդ ի՞նչ է ձեռիդ, Սիմէօն, հարցրին չորսը միասին:

— Կարծես մեր այգու կարմրակատարների դլխին անէծք կայ, պատասխանեց ծերունին, ա-
հա ձեզ համար մի նոր բոյն եմ բերում. երևի ձագուկների հայրն ու մայրը կորել են. նրանցից մէկին ես գտայ ընկած բոյնից ոչ հեռու, իսկ միւսը չերևաց: Գուցէ այս ձագուկներին էլ մի կերպ մեծացնէք:

Երեխաները իսկոյն բոյնը տարան այն սե-
նեակը, ուր գտնւում էր առաջին ընտանիքը: Նրանք այդ նոր բոյնը տեղաւորեցին մի կողովի մէջ և դրեցին միւս լուսամուտը. չետոյ բերեցին նրանց համար ուտելիք, բայց թռչնիկները չա-
րունակ ծլում էին և չէին ուզում ուտել: Երե-
խաները չգիտէին ինչ անեն. վազեցին մայրիկից խորհուրդ հարցնելու, բայց երբ վերադարձան, զարմացած միացին դռան չեմքին — մեծ կարմրա-
կատարը կերակրում էր խեղճ որբիկներին:

— Ախ, ի՛նչ լաւն է, ի՛նչ բարի է եղել մեր թռչունը, ասաց Հեղինէն: Այժմ մենք անհան-
գստանալու ոչինչ չունինք, խեղճ որբիկները իրանց համար հայր գտան. պէտք է միայն այս բոյնն էլ դնել վանդակի մէջ, որ թռչնիկի համար դիւրին լինի կերակրել իւր նոր ձագերին:

Յիրաւի՝ մեծ կարմրակատարը բոլորովին իւր խնամքի տակ առաւ այս նոր ընտանիքը և կե-
րակրում էր նոյնքան սիրով, որքան իւր հարա-
պատ ձագերին:

Շատ չանցած՝ թռչնիկները սկսեցին թևա-
ւորուել և մի գեղեցիկ օր դուրս թռան վան-
դակից իրանց հօր հետ: Բայց երևի նրանք սի-
րել էին փափուկ բոյնը, որովհետև դիչերը նո-
րից վերադարձան:

Սա մի մեծ ուրախութիւն էր երեխաների համար, որոնք արդէն մի փոքր լաց էին եղել իրանց փոքրիկ բարեկամներից զրկուելու հա-
մար:

Ամեն օր թռչնիկները դուրս էին թռչում վանդակից, իսկ դիչերները նորից վերադառ-
նում. վատ եղանակին ցերեկն էլ տենեակումն էին մնում: Այժմ երեխաներից ամենևին չէին վախենում. հանդիպում էին նրանց ուրախ ծըլ-
վլոցով և մինչև անգամ ուտում էին նրանց ձեռից:

Երեխաները թռչնիկներին տալիս էին հաց, չաքար և ուրիշ համեղ բաներ. թռչնիկները այս բոլորն ուտում էին, թէև առհասարակ նրանք կերակրւում էին որդերով և զանազան միջատ-
ներով, իսկ երբեմն քաղցրացնում էին իրանց բերանը պտուղներով:

Այս փոքրիկ և ձեռնասուն թռչնիկները մեծ բաւականութիւն և զուարճութիւն էին պատճառում երեխաներին։

Ս Կ Ի Ւ Ռ

—Մայրի՛կ, սիրելի մայրի՛կ,—չունչը կըտրած ներս վազելով սենեակը՝ գոչում էր Աբրամը,—դրսում մի տղայ փոքրիկ սկիւռ է ծախում, խնդրեմ, գնիր մեզ համար։



—Ա՛խ, մայրի՛կ, հոգեակս, գնիր, խնդրում ենք, ասացին և միւս երեխաները։

—Շատ լաւ, ասենք թէ գնեցի, պատասխանեց մայրը, բայց ո՞րտեղ պէտք է պահէք դուք նրան։

—Մառանում ես երկաթէ մի մեծ վանդակ եմ տեսել, այ նրա մէջ, պատասխանեց Աբրամը։

—Թռչունի վանդակում սկիւռը երկար չէ կարող ապրել, նրան չարունակ շարժողութիւն է հարկաւոր, ասաց մայրը։

—Մայրի՛կ, մի՞թէ վանդակի մէջ սկիւռ չեն պահում, հարցրեց Աբրամը։

—Երբեմն պահում են, բայց ոչ թռչունի վանդակում։ Այն վանդակում, որի մէջ սկիւռ են

պահում, յարմարեցրած է լինում մի անիւ, որի վրայ սկիւռը կարողանում է պտոյտ գալ. բայց, ճիշտն ասած, շատ խղճալի է նայել, թէ ինչպէս ողորմելի կենդանին ամբողջ ժամանակը պտըտւում է միևնոյն տեղում։

—Մայրի՛կ, մենք նրան չետոյ բաց կըթողնենք. գնիր, գոնէ մի առժամանակ կըզուարճանանք, երբ կըտեսնենք, թէ նա ինչպէս ուրախ-ուրախ ցատկում է ծառերի վրայ։

—Եթէ նա դեռ շատ փոքր է և առանց իւր մօր, բաց թողած ժամանակը ինքն իրան չէ կարող ապրել և շուտով կըսատկի. աւելի լաւ է բաց թողնել, երբ նա բոլորովին մեծացած կըլինի, իսկ առայժմ ահա թէ ինչ կարելի է անել. խնդրեցէք դայեակին, որ մաքրի մառանի կողքի սենեակը. նրա մէջ շատ անպէտք բաներ կան, թող լաւերն ընտրէ, իսկ մնացածը մի անկիւն հաւաքէ։ Ահա ձեզ լաւ տեղ սկիւռը պահելու համար։

Աբրամն ու Հեղինէն իսկոյն վազեցին դայեակի մօտ, իրանք էլ մեծ եռանդով օգնեցին նրան, այնպէս որ կէս ժամից չետոյ սենեակն արդէն պատրաստ էր նոր հիւրն ընդունելու համար։ Մինչ այն՝ մայրն արդէն գնել էր սկիւռը և կերակրել հացով ու կաթով։

Երեխաները գեղեցիկ կենդանուն տարան նրա համար պատրաստած տեղը և նա ձեռից

բայց Թողնելուն պէս՝ սկսեց վազվզել և բարձրա-
նալ, ուր որ կարող էր։

—Գիտէք ի՞նչ կայ, ասաց Հեղինէն, հար-
կաւոր է այստեղ մի փոքրիկ ծառ բերել, չէ՞
որ ազատութեան մէջ սկիւռները չարունակ
մագլցում են ծառերի վրայով։ Արամ, դու որ
խնդրես Սիմէօնին մի եղևնի կարէ մեր սկիւռի
համար, շատ լաւ կլինի։

Այս միտքը երեխաներին շատ դուր եկաւ։

Արամն իսկոյն վազեց Սիմէօնի մօտ. նրանք
երկուսով միասին կարեցին մի եղևնի և քաշ
տուին սկիւռի սենեակը. յետոյ Սիմէօնը, որ-
տեղից որ էր, գտաւ մի փոքրիկ տակառ, մէջը
հող լցրեց, յետոյ ծառն ամրացրեց և դրեց սե-
նեակի մէջտեղը։

—Աչխ, կարծես Ծննդեան տօնածառ լինի,
դուչեց Սաթենիկը. միայն մնում է, որ վրան
ոսկեզօծ ընկոյզներ և չաքարեղէն կախենք։

—Ճիշտ, գիտէք ի՞նչ կայ, ասաց Հեղինէն,
վերևի՝ ծառի վրայ կարելի է կախել նաև ուտե-
լիքներ, միայն այնպիսի բաներ, որ սիրում
են սկիւռները։ Մայրիկն ասում է, որ առայժմ
սկիւռին պէտք է կերակրել միայն կաթի բլը-
թոչով, իսկ մի քանի օրից յետոյ նա կարող է
ուտել ամեն բան, ինչ որ առհասարակ ուտում
են սկիւռները։ Մինչ այդ՝ մենք կզարդարենք
ծառը և նրա համար տօնը պատրաստ կլինենք։

—Ա՛յ, ինչ խելօք է Հեղինէն, ինչ լաւ բան
է մտածել, բացագանչեցին երեխաները։

Իսկ սկիւռը առանց չաքարեղէնի էլ ուրախ
էր իւր ծառի վրայ, և, հէնց որ ծառը տնկեցին,
վերջացրին, բարձրացաւ ու նստեց նրա կա-
տարին։

Երեխաները պատմեցին մայրիկին Հեղինէի
հնարագիտութեան մասին և խնդրեցին, որ երբ
քաղաքը մարդ ուղարկելու լինի, պատուիրէ մի
քանի տեսակ միրգ գնել սկիւռի համար, օրի-
նակ՝ չագանակ, նուշ, ընկոյզ, կաղին և այլն։
Մայրիկը խոստացաւ կատարել նրանց խնդիրը
և աւելացրեց, որ նուշ պէտք չէ գնել, որովհե-
տև կարող են դառն կորիզներ պատահել, ո-
րոնցից մի երկու հատը ուտելուն պէս՝ սկիւռը
կըսատկի։

Մի քանի օրից յետոյ քաղաքից բերեցին պա-
տասն տեսակ ընկուզեղէնի մի ամբողջ պարկ։
Երեխաները այդ մրգերն ածեցին կոզովիկ-
ների ու արկղիկների մէջ և կախեցին ծառից.
կախեցին նաև եղևնուց խաղալիկներ։

Սկիւռը հրաշալի կերպով կարողանում էր
բարձրանալ և հասնել այդ հասած պատառներին.
ճիշտ է՝ շուտ էր տալիս ամբողջ կոզովը, սա-
կայն ի՛նչ նպատակի կերպով նստում էր նա ճիւղի
վրայ և առաջին թաթիկներով բռնում ընկոյզը.
նա իւր սուր ատամներով չուտ-չուտ կրծում էր

ընկույզի կճէպը, բայց էր անում մի ճեղք, որտեղից դուրս էր տալիս միջուկը և ուտում մեծ ախորժակով։

Սկիւռը չատ շուտ ընտելացաւ երեխաներին. բաւական էր որ նրանցից մէկն ու մէկը կանչէր՝ «սկի՛ւռ, ա՛յ սկիւռ» և ահա նա խնդոյն գալիս նստում էր նրանց գլխին, ուսերին և կամ ոտը-մոտը վեր բարձրանում նրանց վրայով, ինչպէս անում է ծառ բարձրանալիս։

Սկիւռն ուտում էր նրանց ձեռից և, երբ կշտանում էր պրծնում, աշխատում էր միացածը թագցնել նրանց մատների մէջտեղը։

Մի անգամ երեխաները մտան սենեակը և նրան այնտեղ չգտան. սկսեցին կանչել, «սկի՛ւռ, սիրուն սկիւռ», բայց նա չէր երևում։ Երեխաները վախեցած մտածում են, թէ երևի իրանցից մէկն ու մէկը սենեակի դուռը բաց է թողել և սկիւռն էլ փախել է։

Յանկարծ Հեղինէն նկատեց, որ անկիւնում, ուր կիտած էին անպէտք բաներ, հին բարձի միջից երևում է սկիւռի գեղեցիկ գեղին դնչիկը. երեխաները վազեցին նրա մօտ, և մեր չարաճճի սկիւռը դուրս գալով իր բնից՝ սկսեց ուրախ-ուրախ ցատկոտել մէկի ուսերից միւսի գլխի վրայ։

—Ի՛նչ խելօք է մեր սկիւռը, ասաց Հեղինէն, ի՛նչ լաւ բոյն է չինել իր համար. հիմա

նրա մէջ ի՛նչպէս տաք է և փափուկ, այս ասելով Հեղինէն ձեռը կոխեց բարձի մէջ։

—Աչս, որ իմանաք այստեղ ո՛րչափ կանէփ և ամէն տեսակ ուտելիք կայ, բացագանչեց նա։ Սկիւռը բարձի մէջ մի ամբողջ շտեմարան է չինել, իսկ ես երբեմն զարմանում էի, թէ նա որքան չատակեր է։ Երևի նա իւր համար ձմեռուայ պաշար է պատրաստել։

Սկիւռը գնելիս որոշեցին, որ երբ նա բոլորովին մեծանայ, բաց թողնեն։ Բայց այժմ, երբ հասել էր սկիւռի ազատութեան ժամանակը, երեխաները ցաւում էին, որ պէտք է բաժանուեն այս սիրելի կենդանուց. նրանք միշտ չետաձգում էին սկիւռին արձակելը։ Վերջապէս պէտք էր օրը որոշել։ Ձմեռը նրանք տեղ չունէին սկիւռին պահելու համար և պէտք է չտապէին բաց թողնել, որ նա ժամանակ ունենար իւր համար տաք բոյն և ձմեռուայ կերակուր պատրաստելու։

Եւ ահա, մի գեղեցիկ օր, Արամը, Հեղինէն, Սուրէնը և Սաթենիկը միասին գնացին սկիւռի սենեակը և դուռը բաց թողին. սակայն կենդանին փախչելու միտք անգամ չունէր։ Նա ինչպէս և միշտ չատ ուրախացաւ հիւրերի գալուն և սկսեց բարձրանալ և ցատկել մէկի վրայից միւսի վրայ։ Իսկ երբ երեխաները դուրս եկան

սենեակից, սկիւռը վազեց նրանց ետևից և թռաւ նստեց Հեղինէի ուսի վրայ։

Երեխաները յոյս ունէին, որ թեր և սկիւռը ինքը չցանկանայ իրանցից բաժանուել, բայց երբ ամենքը դուրս եկան պատշգամբը և կենդանին իրան բաց օդում զգաց, տեսաւ գեղեցիկ բարձր ծառերը, այն ժամանակ առանց երկար մտածելու՝ մի ակնթարթում բարձրացաւ մօտիկ ծառի գագաթը։ Երեխաները և տրտմում էին, որ բաժանուում են իրանց փոքրիկ բարեկամից, և ուրախանում, երբ տեսնում էին, թէ ի՛նչպէս, հեշտութեամբ և գեղեցիկ չարժումներ անելով՝ սկիւռը մագլցում էր մէկ ծառից միւսը։ Վերջապէս նա լոլորովին անհետացաւ երեխաների աչքից։

— Աւ՛ֆ, մայրի՛կ, ասաց տխրութեամբ Սաթենիկը, ասա՛, ո՞ւր է այժմ մեր սկիւռը, ո՞ւր պէտք է նա գիշերն անց կացնէ։

— Շատ կարելի է, որ նա գնայ մեր այգու եաևի եղևնու անտառը և այնտեղ գիշերն անց կացնէ մի որևէ ծառի խոռոչում, իսկ ցերեկը, երբ կամենայ հագատանայ, կապաստանի ագռաւի հին բնի մէջ։ Սկիւռները, բացի իրանց սեպհական բնակարաններից, սովորաբար ունենում են և մի քանի կացարաններ, որ չինում են մեծ թռչունների թողած հին բներում։ Իրանց տներում նրանք միայն գիշերում են և պաշտպանում վատ եղանակից, իսկ ցերեկը հանգստանում են կացարաններում։

Ճաշից յետոյ ամենքս հաւաքուեցանք պատշգամբը։ Յանկարծ Հեղինէն սկսեց բղաւել՝ «այ, այ, այս ի՞նչ ընկաւ գլխիս»։ Նա ձեռը տարաւ դէպի գլուխը և տեսաւ, որ մի բան արդէն նստել է նրա ուսին։

— Սկի՛ւռն է, սկիւռը՛, բացագանչեցին Արամը, Սուրէնը և Սաթենիկը։

Յիրաւի՝ դա սկիւռն էր։ Երեխաների ուրախութեանը չափ չկար։ Նրանք ցանկացան բռնել կենդանուն, բայց նա փախչում էր. երևի վախենում էր, թէ նորից կբռնտարկեն սենեակում։

Սուրէնը վազեց ընկոյզ բերելու և մի մեծ բուռ չոր տուեց պատշգամբի վրայ։ Սկիւռը սկսեց ուտել և երբ կշտացաւ, մի ընկոյզ էլ դրեց բերանը և չուտով անյայտացաւ նրանց աչքից։

Այն օրից յետոյ երեխաները միշտ ընկոյզ էին դնում պատշգամբում, և յաճախ, երբ եղանակը լաւ էր լինում, սկիւռը գալիս էր այնտեղ, մօտենում երեխաներին, փարւում նրանց, ուտում պատրաստած կերակուրը, ապա անյայտանում, տանելով իւր հետ ընկոյզի պաշարը։

ԽԼՈՒՐԴ

Մի անգամ երեխաները այգում վազվզում էին իրար ետևից, իսկ մայրը ծառուղիում նըստած էր նստարանի վրայ։ Վերջապես նրանք յոգնեցին և եկան նստեցին մոր մոտ։

—Տե՛ս, մայրի՛կ, որքան փոսեր կան այստեղ, նկատեց յանկարծ Սուրէնը, երևի մի որևէ կենդանի է չինել։

—Այո՛, որդեակս, դա խլուրդի գործն է, պատասխանեց մայրը։

—Ախ, մայրի՛կ, ես տեսել եմ խլուրդ, Սիմէօնը մի անգամ ինձ ցույց տուեց մի սատկած խլուրդ, ասաց Սուրէնը. նա հիանալի մորթ ունի, կարծես թաւիշ լինի, գույնը մուգ և փայլուն։ Նրա դունչը շատ սուր է. թաթիկները բոլորովին ապիտակ են և ձեռի նման, միայն սուր-սուր ճանկեր ունին. առաջի թաթիկները շատ ու շատ լայն են ետիններից, կարծես թէ փոքրիկ թիակներ լինին. պոչը շատ կարճ է, իսկ աչքեր և ականջներ խլուրդը բոլորովին չունի։

—Սուրէ՛ն, ինչպէս տեսնում եմ, դու շատ լաւ ես դիտել խլուրդին, ասաց մայրը. միայն մի բանում սխալւում ես. խլուրդը ունի և աչքեր, և ականջներ, միայն աչքերը սաստիկ մանր են, կարծես փոքրիկ, շատ փոքրիկ հուլունքներ լինին և ծածկուած են կոշտ ու փայլուն մազերով։ Նրա աչքերը համարեա թէ չեն տեսնում, բայց լսելիքը շատ զարգացած է. արտաքին ականջներ նա չունի, իսկ ականջի անցքը թաղուած է խիտ մազերի մէջ։ Այդպիսի ականջները խլուրդի համար շատ ձեռնտու են, որվհետև հակառակ դէպքում նրանք չարունակ հողով կլցուէին, հողը փորելու ժամանակ։

—Այստեղ երևի խլուրդները շատ կան, նկատեց Սուրէնը. տես, մայրիկ, որչափ շատ փոսեր կան։

—Ո՛չ, պատասխանեց մայրը, սա մի խլուրդի գործ է, որովհետև խլուրդները սիրում են միմեանցից հեռու և միայնակ ապրել։ Խլուրդը իր բոյնը չինում է գետնի տակ և բաւական խոր է փորում, շատ անգամ ծառի արմատների մօտ։ Բնի մէջ նա իր համար անկողին է չինում տերևներից, յարդից և փափուկ արմատներից։ Նա իր ննջարանի չորս կողմը չինում է մի նրբանցք վանապան անցքերով, որոնք բոլորը միանում են գլխաւոր մուտքի հետ։ Այս մուտքը շատ երկար է լինում, երբեմն մի քանի տասնեակ արշին։ Խլուրդը երբ փորում է այս մուտքը, հողը դուրս չէ տալիս, այլ սեղմում է պատերին։ Նա այս բոլորը անում է այն նպատակով, որ իրան լաւ

պաշտպան լինի ամեն տեսակ փորձանքներից։ Միայն գլխաւոր մուտքի վերջում նա դուրս է տալիս հողը։ Այն խլուրդը, որ փորել է այս փոսերը, շատ հեռու է ապրում. նա այստեղ գալիս է միայն որս անելու համար։ Այդ որսորդական անց.քները նա չինում է այսպէս. իւր սրածայր դնչով փորում է հողը, որ իւր առաջի թաթիկներով, կարծես թիակներով, ետ է տալիս և երբ շատ հող է հաւաքւում, այն ժամանակ գետինը ծակում է դէպի վեր և աւելորդ հողը դուրս տալիս։ Ահա այդ ձևով են կազմուել հողի այս կոյտերը, որ դու տեսնում ես ամեն մի ծակի մօտ։

Խլուրդը մի անց.ք էլ չինում է դէպի մօտակայ գետակը կամ լճակը, որովհետև նա առանց ջրի ապրել չէ կարող։ Եթէ մօտերքում ջուր չկայ, այն ժամանակ նա փոս է փորում անձրևի ջուր հաւաքելու համար։ Խլուրդը առհասարակ ջրից չէ վախենում և, երբ հարկաւոր է լինում, նա մինչև անգամ լող է տալիս։ Խլուրդի չինած ճանապարհներով անցնում են և ուրիշ կենդանիներ՝ խլէզներ, լակեր, գորտեր, մկներ և այլն։ Բայց Աստուած չանէ, եթէ նրանց պատահէ տանտէրը, իսկոյն նրանց մէջ կռիւ է սկսւում։ Մինչև անգամ նա չէ խնայում իւր եղբայր-խլուրդին, որ անզգուշութեամբ ընկնում է նրա բոյնը. սաստիկ կռուից յետոյ՝ յաղթողը ուտում է յաղթուածին։

Ազատ ժամանակը, երբ ո՛չ փորում է և ո՛չ որսում, խլուրդը անց է կացնում իւր ննջարանում, որ նրա ամենից ապահով տեղն է։ Նա բոլորովին գոհ է, երբ կուշտ է և ոչ մի կենդանի արարած նրան անհանգիստ չէ անում։

Սակայն լինում է ժամանակ, երբ խլուրդն էլ ձանձրանում է իւր միայնակ կեանքից։ Նա սկսում է տխրել և անդ մտքում դնում է, որ իւր համար ընկեր ճարէ։ Այդ նպատակով նա դիւրերները դուրս է գալիս իւր բնից և սկսում է դրսում թափառել, որ հանդիպէ մի այնպիսի խլուրդի, որի հետ նա կարող է ընկերանալ։ Այդ միջոցին նա սովորականից աւելի բարկացկոտ է լինում և վայ է՝ թէ պատահէ մի ուրիշ խլուրդի, որ նոյնպէս ընկեր է որոնում. նրանց մէջ իսկոյն կռիւ է ծագում, որ և վերջանում է նրանով, որ մէկը միւսին ուտում է։ Իսկ երբ պատահում է մի այնպիսի խլուրդի, որի հետ կարող է ընկերանալ, իսկոյն աշխատում է տանել նրան իւր բոյնը. սակայն պէտք է նկատել, որ դա այնքան էլ հեշտ չէ յաջողւում։

Նոր խլուրդը յաճախ ամեն կերպ աշխատում է փախչել, բայց երբ այդ նրան չէ յաջողւում՝ հաշտւում է իւր նոր վիճակի հետ։ Շուտով երկու ընկերներն ընտելանում են իրար։

Խլուրդների ձագերը ծնւում են շատ փոքրիկ և բոլորովին մերկ։ Նրանք սաստիկ չատա-

կեր են լինում, այդ պատճառով էլ արագ են մեծանում: Երկու ամսից յետոյ նրանք արդէն բոլորովին մեծ խլուրդների չափ են: Քանի ձագերը փոքր են, ծնողները քնքշութեամբ խնամում են նրանց, կերակրում են և վտանգի ժամանակ տեղափոխում ուրիշ տեղ:

Բայց երբ ձագերը մեծանում են և սկսում են առանձին ապրել, արդէն ծնողներն էլ մինչև այդ՝ ձանձրացած են լինում և բաժանւում են միմեանցից. ամեն մէկը դարձեալ թագնւում է իւր բնում և չէ ուզում ոչոքի տեսնել:

—Մայրի՛կ, ճշմարի՞տ է, որ խլուրդները ուտում են նաև արմատներ, որով վնասում են բոյսերին, հարցրեց Սրամը:

—Ո՛չ որդեակս, նրանք երբէք արմատներ չեն ուտում, որքան էլ քաղցած լինին: Ճիշտ է, նրանք գետինը փորելիս՝ կտրատում են շատ արմատներ, բայց ոչնչացնելով ծառի արմատների մօտ գտնուած շատ որդեր ու ճիճուներ՝ պաշտպանում են ծառը վնասուելուց: Խլուրդները կերակրւում են այն բոլոր կենդանիներով, որոնց կարողանում են յաղթել, օրինակ՝ ուտում են գորտ, լակ, մուկ, գտնգան միջատներ, ճիճուներ, թըրթուրներ, մեղրիկներ և այլն:

—Մայրի՛կ, այդ ի՞նչ տեսակ կենդանի է մեղրիկները, ես առաջին անգամն եմ լսում, հարցրեց Հեղինէն:

—Մեղրիկները միջատ է, որ համարեա թէ միշտ հողի մէջ է ապրում: Նա ունի լայն ատամնաձև ոտներ, որոնք շատ յարմար են փորելու համար, և այդ գործը նրանք կատարում են մեծ յաջողութեամբ: Նրանք սովորաբար ընտրում են ամենից փափուկ և լաւ պարարտացրած հողը. ինչպէս օրինակ՝ ջերմոցները և բանջարանոցները նրանց ապրելու սիրած տեղերն են: Նրանք իրանց բոյնը չինում են հողի մէջ և խլուրդների պէս անցքեր են փորում գանազան ուղղութիւններով, որով և վնասում են արմատներին: Շնորհիւ այդ փորփորուքներին մինչև անգամ բոյսերը բոլորովին չորանում են: Մենք պէտք է շատ ու շատ չնորհակալ լինինք, որ խլուրդները ոչնչացնում են այդ վնասակար միջատներին:

Որովհետև մեղրիկները համարեա միշտ հողի մէջ են ապրում, ուստի շատ քիչ են օգտուում իրանց մեծ ու զարգացած թևերից: Միայն երբեմն, ուշ երեկոյեան, կարելի է տեսնել նրանց գետնի երեսից ոչ այնքան բարձր թռչելիս: Դուք խնդրեցէք Սիմէօնին, նա ձեզ համար կբռնէ մի մեղրիկ և ցոյց կըտայ: Սիմէօնը սատիկ բարկացած է նրանց վրայ, որովհետև նրանք այս տարի շատ ճմերուկ և սեխ են փչացրել:

—Մայրի՛կ, դու ասում էիր, թէ խլուրդները կերակրւում են շատ տեսակ կենդանիներով,

բայց մի՞թէ նրանց ոչոք չէ ուտում կամ սպանում, հարցրեց Հեղինէն։

—Ընդհակառակը, աղջիկս, նրանք շատ թըշնամիներ ունին։ Շատ անգամ մարդիկ, կարծելով թէ նա վնասում է ծառի արմատներին, ոչնչացնում են նրանց մեծ քանակութեամբ. բայց, ինչպէս դուք տեսաք, խլուրդները ընդհակառակը շատ մեծ օգուտներ են տալիս մեզ, ոչնչացնելով այն բոլոր միջատներին ու ճիճուներին, որոնք վնասում են բոյսերին։ Շատ կենդանիներ նոյնպէս սպանում են խլուրդներին, թէև շատ քչերն են կերակրւում նրանց մսով. սակայն կան այնպիսիները, որ չեն ղզում խլուրդի մսից, ինչպէս օրինակ՝ բուերը, ագռաւները, աղուէսները, ոլնիները և այլն.

—Մի՞թէ ոլնին կարողանում է խլուրդ բռնել, հարցրեց Արամը, չէ՞ որ նա շատ դանդաղ է չարժւում։ Գի՞տես, մայրի՛կ, այստեղ, մեր այգում մէկ ոլնի կայ. նա ցերեկը երբէք չի երևում, իսկ երեկոները միշտ դուրս է գալիս։ Ես և Հեղինէն երբեմն երկար ժամանակ նայում ենք նրան։ Նա շատ ծիծաղաշարժ կենդանի է. երբ վախենում է՝ իսկոյն կուչ է գալիս և փչերով ծածկուած մի կծիկ դառնում. այն ժամանակ մենք բոլորովին լուռ կանգնում ենք և սպասում։ Եւ ահա՝ ոլնին քիչ-քիչ սկսում է դուրս գալ կծիկի միջից. առաջ հանում է իւր

ոտիկները, յետոյ երևում է բարկացկոտ դէմքի ծայրը, իսկ մի վոքր էլ յետոյ երևում է ամբողջ դունչը։ Այդ ժամանակ աչքերն այլ ևս բարկացած չեն նայում, այլ ուրախ։ Վերջապէս նա սկսում է չարժուել, բայց որչափ դանդաղ և ծիծաղաշարժ։ Ճիշտն ասեմ՝ ինձ համար անհասկանալի է, թէ նա ի՞նչպէս է կարողանում որս անել, ասաց Արամը։

—Բայց դուք պէտք է իմանաք, որդիս, որ նա պարտականալի ճարպիկ որսորդ է և ոչ միայն խլուրդներ է բռնում, այլ և մկներ, չնայելով՝ որ վերջիններըը անհամեմատ արագաշարժ են և ճարպիկ։

—Իսկ ես կարծում էի, թէ նա միայն պտուղներով է կերակրւում։ Ես մի օր մինչև անգամ նրան տեսայ խնձոր ուտելիս։

—Այո՛, ոլնին երբեմն բերանը քաղցրացնում է խնձորով, բայց դա նրա սովորական կերակուրը չէ և նա հազիւ թէ կարողանայ երկար ապրել, եթէ միայն պտուղներով կերակրուի։ Նա կերակրի մէջ ընտրութիւն չէ անում և ուտում է ինչ որ հանդում է՝ որդեր, թրթուրները, բզեզները, գորտ, մուկ, փոքրիկ թռչուններ, լակ և մինչև անգամ թունաւոր օձեր։ Օձերի հետ նա բանը շատ հեշտութեամբ է վերջացնում. օձի կծածը նրան ոչ մի վնաս չէ հասցնում։ Ոլնու հասար ամենից համեղ կերակուրը—մուկն է։ Տես-

նո՞ւմ ես, ովնին որքան օգուտներ է տալիս մարդուն, իսկ միասս ամենևին:

—Մայրի՛կ, աչխատենք նրա բոյնը գտնել, ասաց Սուրէնը, ես չատ եմ ցանկանում տեսնել, թէ նա ո՞րտեղ և ի՞նչպէս է ապրում:

— Ովնին սովորաբար ապրում է մացառներով ծածկուած մի փոս տեղ, այնտեղ էլ չինում իւր բոյնը. իսկ երբ մի այդպիսի տեղ չէ գտնում, այն ժամանակ ինքը մեծ համբերութեամբ փոս է փորում, մէջը տերևներ, մամուռ, յարդ և այլ բաներ ածում, որ փափուկ լինի: Մարդու ծիծաղը գալիս է, երբ տեսնում է, թէ նա ի՛նչպէս է հաւաքում այն բոլորը, ինչ որ հարկաւոր է նրան բոյնը փափկացնելու համար: Նա գլորւում է այն տեղերով, ուր տեսնում է յարդ, մամուռ, տերևներ և այլն: Դրանք կպչում են նրա փչերին և այդպէս բեռնաւորուած նա գալիս է տուն: Ովնին առհասարակ երեկոներն է որսի դուրս գալիս, իսկ ամբողջ օրը նա քնում է և այնպէս խոր է քնում, որ հնարեաւ անկարելի է նրան արթնացնել, իսկ եթէ յաջողւում էլ է՝ աչքը բանալն ու խփելը մէկ է լինում: Ովնին քնելիս միշտ կծկւում է, որով և պաշտպանւում է իւր բազմաթիւ թշնամիներից: Նրա ամենաչար թշնամին ագուէսն է, որ այդ դրութեան մէջ էլ հնար է գտնում խաբել խեղճ ովնուն: Ագուէսը կամաց-կամաց ովնու կծիկը

գլորում է մինչև մօտիկ գետակը կամ լճակը և գցում է ջրի մէջ: Խեղճ ովնին վախից կամաց-կամաց բացւում է. խորամանկ ագուէսը իսկոյն բռնում է իւր զոհի դնչից, սպանում և ապա հանգիստ սկսում է անուշ անել:

Ովնին չատ միամիտ կենդանի է. յնտելանում է չատ չուտ: Եթէ ուզում էք, փորձեցէք ընտելացնել այն ովնուն, որ Արամը և Հեղինէն գտել են մեր այգում:

ԱՆԱՍՆԱՆՈՑ

— Երեխանե՛ր, ասաց մի անգամ մայրը, այսօր անասնանոցում խուզում են մեր ոչխարներին. ես ու դայեակը գնում ենք նայելու. դուք էլ ուզո՞ւմ էք գալ:

— Ի հարկէ, ի հարկէ, գոչեցին ամենքը միասին. մենք դեռ ոչ մի անգամ չենք տեսել, թէ ի՞նչպէս են ոչխար խուզում,— և մի ակնթարթում հաւաքուեցան մօր չուրջը:

Անասնանոցի բակում, թարմ ծղնօտի վրայ նստած էին մի քանի գիւղացի կանայք: Իւրաքանչիւրի գոգում ոտները կապկապած մի ոչխար կար, որի ալիքանման բուրդը կանայք խուզում էին մեծքերան մկրատներով:

Ոչխարներից մի քանիսը պառկած էին բոլո-

բովին հանգիստ և չատ խեղճ-խեղճ նայում էին. միտները մայում էին և աչխատում դուրս պըր-ծնել կանանց ձեռից. այդպիսիներին կապկա-պում էին աւելի և պինդ։



— Խեղճ դառ-նուկները, ո՞վ գիտէ՝ ի՛նչպէս ցաւում է, ասաց Հեղինէն։

— Այնպէս, ինչ-պէս ցաւում է ձեր մտերը խուզելուց, պատասխանեց մայ-րը. բայց եթէ ոչխարները հասկանային, որ մարդիկ նրանց վատութիւն չեն անում, հանգիստ կըմնային և թոյլ կըտային խուզել։ Իսկ այժմ առանց կապելու անկարելի է. ամենից ճարպիկ կինն էլ կարող է խուզելիս հեշտութեամբ վէրք հասցնել։

— Ահա մէկին արդէն խուզել պրծել են. տե-սէք, թէ ի՛նչպէս նրա բոլոր բուրդը վէր են բե-րել, կարծես թէ մորթը վրայից հանած լինէին, ասաց Սուրէնը։

Խուզած ոչխարի ոտները բաց արին և նա խելագարի պէս սկսեց ցատկել ու վազվզել բա-զում. հաւիւ հաղ կաշտղացան փարախը քշել նրան։

— Ի՛նչ ծիծաղելի է այս ոչխարը, ասաց

Սաթենիկը, միայն վախենում եմ, որ նա ձմեռը առանց իւր մուշտակին մրսի։

— Մայրի՛կ, ինչո՞ւ ոչխարներին ամառը չեն խուզում, երբ դեռ տաք է։

— Նրանց խուզում են նաև գարնանը. տես-նում ես՝ նրանց բուրդը ի՛նչպէս երկարացել է ամառուայ ընթացքում։ Մինչև ցրտերի վրայ հասնելը՝ նրանք դարձեալ նոր մուշտակներ կը-հագնեն։

— Մայրի՛կ, տե՛ս, ինչ կեղտոտ է այս բուր-դը և ինչ վատ հոտ է գալիս, նկատեց Հեղինէն։

— Հոգ չէ, սիրելիս, այս բուրդը դեռ պէտք է լուանան, չորացնեն, իսկ նախ քան մանելը դեռ պէտք է մի լաւ գզեն, այնպէս որ դու այ-ևս չես կարողանալ ճանաչել, այնքան մաքուր, փափուկ և փայլուն կըդառնայ։

— Մայրի՛կ, այսպիսի՞ բրդից են մեր ձմե-ռուայ հագուստները, հարցրեց Սաթենիկը։

— Ո՛չ, սիրելիս, այս բրդից կարելի է չինել միայն կոպիտ գործուածքներ, իսկ մեր ձմեռուայ հագուստները աւելի լաւ բրդից են։ Այստեղ չեն կարողանում պահել այն տեսակ ոչխարները, ո-րոնք լաւ բուրդ են տալիս, այդ պատճառով նրանք չեն կարողանում տանել մեր խստաշունչ ձմեռը։ Նոյն իսկ մեր ոչխարների տուած ամառուայ բուրդը անհամեմատ լաւ է, քան թէ ձմեռուանը։

Այդ րոպէին լսուեց կովերի բառաչիւնը։

— Ա՛խ, կովերը տուն վերադարձան. ի՛նչ լաւ եղաւ, որ մենք այստեղ մնացինք մինչև նախ- րի վերադառնալը, վատուց է՝ որ չէինք տեսել մեր կովերին, ասացին երեխաները:

— Ախո՛ս, որ մենք հաց չենք բերել մեզ հետ, փչեց յանկարծ Հեղինէն:

— Նախրապած Աննան մեզ հաց էլ կըտայ, աղ էլ, վճռեց Աբրամը:

Երեխաներից ամեն մէկը ունէր իւր սիրելի կովը և ամեն անգամ, երբ նրանք գալիս էին անաս- նանոց, իրանց հետ բերում էին հաց և աղ կո- վերին տալու համար: Կովերը երեխաներին լաւ էին ճանաչում. ան՛ա մօտեցան, սկսեցին հոտո- տել և շատ զարմացան, երբ տեսան, որ նրանք եկել են դատարկ ձեռներով:

— Աննա՛, հոգեակ, մի քիչ հաց տուր մեզ, խնդրեցին երեխաները:

— Դուք էլ շատ էք երես տալիս ձեր կո- վերին, ասաց Աննան. չգիտէք թէ ի՞նչ են բե- րել նրանք մեր կանանց գլխին. նրանց բոլոր հացը կերան. այդ դեռ բաւական չէ, Սուրէնի կովը Մարթայի աղը թաշկինակի հետ միասին կերաւ. ոչ մի կերպով չկարողացան գո՛նէ թաշ- կինակն ազատել:

— Ա՛յ, այ, այ, ի՛նչ վատն ես դու, ասաց Հեղինէն Սուրէնի կովին:

— Ես կըխնդրեմ մայրիկին, որ Մարթային

մի նոր թաշկինակ տայ. իսկ դու, Աննա՛, խըն- դրում ենք, հաց տուր մեզ, չէ՞ որ կովը մեղաւոր չէ, նա ի՞նչ գիտէ՝ թէ վատ բան է անում, ա- սաց Սուրէնը, փայփայելով իւր գեղեցիկ կովին:

— Ես գիտեմ, դուք չէք հանգստանալու, մին- չև ինձնից հաց չառնէք. լաւ, իսկոյն կըբերեմ, ասաց Աննան և վազեց հացի:

Այդ միջոցին դայեակը մօտեցաւ Սաթենի- կին և ասաց. «դու չետոյ կըկերակրես քո Նաշ- խունին, իսկ այժմ գնանք հաւանոցը, տե՛ս, թէ ես քեզ ի՛նչ պէտք է ցոյց տամ»:

Սաթենիկը գնաց դայեակի հետ միասին. նա չկարողացաւ դուշակել, թէ դայեակն ի՞նչ պէտք է ցոյց տայ նրան:

Երեխաները իրանց համար մի-մի հաւ ու- նէին. այդ հաւերի թէ՛ ձուերը և թէ ճուտերը նրանց էին պատկանում: Այս ամառ Սաթենիկը շատ էր ցաւում, որ Աբրամի, Հեղինէի և Սուրէ- նի հաւերը ճուտեր հանեցին, իսկ իւր գեղեցիկ Սևիկը չուզեց թուխս նստել: Սաթենիկը մի օր մինչև անգամ մի փոքր էլ լաց եղաւ, երբ տե- սաւ, որ միւս հաւերը մանն են գալիս բազմա- թիւ ճուտերով շրջապատուած, իսկ իւր Սևի- կը մանն է գալիս մէն-մենակ: Բայց ան՛ա, երբ միւս հաւերի ճուտերը մեծացան, յանկարծ Սևիկի խելքին փչեց թուխս նստել. երևի նա էլ հասկա- ցել էր—«լաւ է ուշ՝ քան երբէք»: Դայեակն այդ

դիտէր, սակայն այդ մասին ոչինչ չէր ասում, որ յանկարծ ուրախացնէ Սաթենիկին: Այժմ ճուտերն արդէն դուրս էին եկել և ահա նա Սաթենիկին տարաւ հաւանոցը ցոյց տալու: Ո՛րչափ զարմացաւ և ուրախացաւ նա, երբ տեսաւ իւր Սևիկին չրջապատուած փոքրիկ ճուտերով: Ճուտերը տասը հատ էին:



—Ո՜հ, գոչեց Սաթենիկը, որի այտերն ուրախութիւնից կարմրել ու վառուում էին, ի՛նչ լաւն է իմ Սևիկը: Այդ ասելով՝ նա բռնեց հաւը և սկսեց փայփայել, իսկ ճուտերից մէկը վերցնում, միւսը վայր էր դնում:

—Սիրելի դայեակ, ճուտերը տանենք մայրիկիս, Հեղինէին և եղբայրներիս ցոյց տանք,

ասաց Սաթենիկը և դոդնոցը բռնեց, իսկ դայեակը զգուշութեամբ ճուտերը դրեց նրա մէջ:

—Արա՛մ, Հեղինէ՛, Սուրէ՛ն, տեսէք, ի՛նչ կայ իմ դոդնոցում, կանչում էր Սաթենիկը, կրկին վերադառնալով անասնանոցը. տեսէ՛ք, տեսէ՛ք, ի՛նչ խելօքն է իմ Սևիկը:

Սաթենիկը այնքան բախտաւոր էր, որ միւս երեխաները չէին կարող չմտածակցել նրա ուրախութեանը:

Տուն վերադառնալու ժամանակ էր: Սաթենիկը նախ մտաւ հաւանոցը, ուր Սևիկն անհամբեր սպասում էր նրա վերադարձին: Նա չատ ուրախացաւ, երբ տեսաւ, որ Սաթենիկը իւր բոլոր ճուտերը անվնաս յանձնեց իրան:

ԳԱՅԵԱԿԻ ԱՐՏԸ

Երկարատև գեղեցիկ եղանակներին յաջորդեցին անձրևները, այնպէս որ մարդ երբեմն ամբողջ օրերով արևի երես չէր տեսնում: Հայրիկն ու մայրիկը չատ գոհ էին, որ սկսել էր անձրև գալ, որովհետև անձրևների չնորհիւ հաճարը հրաշալի կերպով բարձրացաւ և ամբողջ արտը ծածկուեց խիտ կանաչ խոտով:

Բայց երեխաները այնքան էլ գոհ չէին, որովհետև ամբողջ օրերով պէտք է տանը նստած

ճնայլին։ Ահա այժմ պէտք եկան այն գրքերն ու խաղալիքները, որ բերել էին քաղաքից։

Մայրիկը նոյնպէս ունէր մի քանի հատ գեղեցիկ գրքեր, բայց այդ գրքերը նա երեխաներին ձեռք չէր տալիս, որովհետև վախենում էր թէ կվնասեն։ Միայն երբեմն ինքը ցոյց էր տալիս նրանց։ Մայրիկի գրքերը շատ դուր էին գալիս մանաւանդ Սաթենիկին և Արամին։ Սաթենիկը սիրում էր այդ գրքերը, որովհետև մայրիկը՝ պատկերներ ցոյց տալիս՝ բացատրում էր և նրանց նշանակութիւնը, իսկ Արամը հաւանում էր նրանց միջի գեղեցիկ պատկերները։

Երբեմն, վատ եղանակին, Հեղինէն ու Սուրէնը նստում էին մայրիկի մօտ իրանց փոքրիկ աթոռների վրայ, Սաթենիկը նստում էր մայրիկի գոգում, իսկ Արամը բռնում էր մեծ գիրքը, որ մայրիկը կարդալիս չյոգնէ և միևնոյն ժամանակ հիանում էր նրա միջի գեղեցիկ պատկերներով։

«Ախ, երբ պէտք է ես էլ կարդանամ այսպէս նկարել»։ Այդ գրքի մէջ մեծ մասամբ կենդանիներ և բոյսեր էին նկարած։

— Մայրի՛կ, տե՛ս, այս կապոյտ ծաղիկները որքան նման են դայեակի արտում մեր տեսած ծաղիկներին, ասաց մի անգամ Սաթենիկը, ցոյց տալով գրքի միջի պատկերը։

— Այո՛, աղջիկս, վուշը այսպէս է լինում, պատասխանեց մայրը։

— Մայրի՛կ, մենք բոլորովին մոռացել ենք դայեակի արտը. արդէն բոլոր արտերը հնձել վերջացրել են, իսկ նրա վուշը դեռ այնպէս ճնում է։

— Ո՛չ, Սաթենիկ, չենք մոռացել. վուշ ժողովելու ժամանակը հէնց հիմա է. հայրիկն արդէն կարգադրել է, որ վաղը կանայք գնան ու, բաղեն, մենք էլ կըգնանք նայելու նրանց աշխատանքին։

— Ախ, ի՛նչպէս լաւ կըլինի, ուրախ-ուրախ բացագանչեցին երեխաները։

Այդ գիւղում վուշի մշակութեամբ չէին պարապում, որովհետև վուշը աւելի լաւ է աճում պարարտ աւազոտ տեղում, մինչդեռ գիւղի հողը սևահող էր։ Բայց դայեակը հաւատացնում էր թէ առնուած բոլոր քաթանները և թելերը փըտած են լինում, որ լաւ է միայն տանու թելն ու քաթանը։ Ահա հէնց նրա բաւականութեան համար՝ ամեն տարի մի օրավար հող վուշ էր ցանւում, և ամենքը այդ արտը կոչում էին «դայեակի արտ»։

Միւս օրը երեխաները շատ ուրախացան, որ առաւօտից արդէն արեգակը սկսել էր դուրս նայել ամպերի միջից, իսկ ցետղ փոքր ա-ռ փո-

քըր երկինքը բոլորովին պարզեց։ Ճաշից յետոյ ամենքը գնացին դայեակի տրամը։

Մի քանի կին այնտեղ քանդում էին վուշը և փոքրիկ կապեր կապում։

—Մայրի՛կ, ինչո՞ւ են վուշը քանդում և ոչ թէ հնձում, մի՞թէ քանդելն աւելի հեշտ է, հարցրեց Սաթենիկը։

—Ո՛չ, սիրելիս, հեշտութեան համար չէ, այլ վուշի ամենահարկաւոր մասը ցօղունն է և ոչ թէ սերմը. այդ պատճառով էլ քանդում են արմատից, որ ոչինչ չկորչի։

—Մայրի՛կ, մի՞թէ քաթանը այդ ցօղուններից են շինում. ես լիշում եմ, դու մի անգամ ասացիր, որ իմ շապիկը վուշից է, բայց իմ շապիկը բարակ ու փափուկ է, իսկ վուշի ցօղունները հաստ են ու կոշտ։

—Աղջի՛կս, բայց դու չգիտես, որ դեռ շատ աշխատութիւն է հարկաւոր գործ դնել այս վուշի վրայ, մինչև նրանից շապիկ կարելը։ Ահա պատմեմ։ Վուշը քանդելուց յետոյ փոքրիկ կապեր են կապում և դնում են ջրի մէջ, որ թրջուի. վուշը ջրի մէջ մնում է մօտ երեք շաբաթ, այդ միջոցին նա լաւ փափկանում է։

—Մայրի՛կ, ինչո՞ւ են այդպէս անում։

—Նրա համար, որ յետոյ հեշտ լինի արտաքին կեղևը բաժանել միջի թելերից։ Վուշը ջրից հանելուց յետոյ՝ նրա փոքրիկ խուրձերը

դիք-դիք կանգեցնում են, որ չորանայ. չորանալուց յետոյ սկսում են ծեծել, որով արտաքին կեղևը բաժանւում է միջի թելերից. յետոյ քըրքրում են վուշը՝ կեղևից բոլորովին մաքրելու համար։ Վերջապէս սանդերքի վրայ գզում են, ուրից յետոյ վուշը նմանւում է երկար փափուկ մազերի։ Ահա այդ մանանման փափուկ թելերից մանածներ են պատրաստում, իսկ այդ մանածներից գործում են քաթան. որից յետոյ միայն կարելի է շապիկ կարել։

—Մայրի՛կ, ասաց Սուրէնը, ես տեսել եմ, որ կանեփն էլ վուշի պէս քանդում են. մի՞թէ նրա ցօղուններից էլ մի որևէ բան են շինում։

—Այո՛, կանեփն էլ մշակում են ուղիղ այնպէս, ինչպէս և վուշը։ Կանեփի թելերից նոյնպէս գործում են զանազան տեսակ կօտորներ, մինչև անգամ շատ լաւ և պինդ գործուածքներ, բայց մեծ մասամբ կանեփից շինում են հաստ ու բարակ թոկեր։

—Մայրի՛կ, իսկ ինչո՞ւ կանեփը բոլորը միասին չեն քանդում. ես տեսել եմ, թէ ինչպէս կանայք ման են գալիս կանեփի արտի մէջ և կարծես թէ ընտրովի քանդում նրա ցօղունները, իսկ մնացածը արդէն քանդում մի անգամից։ Մի՞թէ բոլորը միասին չէ հասնում։

—Ահա թէ ի՛նչու։ Կանեփի ցօղունները բոլորն էլ սերմ չեն տալիս, այդ պատճառով ա-

ռաջ ընարում են սերմ չտուող ցօղունները, իսկ սերմ տուողները թողնում են:

—Մայրի՛կ, իսկ վուշի և կանեփի սերմերից ի՞նչ են չինում. երևի մի որևէ բանի վրայ գործ ածում կըլինին, այնպես չէ՞, հարցրեց Սաթենիկը

—Այո՛, աղջիկս, նրանցից չինում են այն կանաչ իւղը, որ ձէթ է կոչւում: Մեր գաւառակը պատ օրերին այդ իւղով կերակուր է պատրաստում, իսկ գիւղացիք համարեա միչտ այդ իւղն են գործ ածում կերակրի մէջ. բացի դրանից այդ ձէթով եփում են ներկերը, որով ներկում են տների պատերն ու տանիքները: Մինչև անգամ դիրդն էլ դուր չէ կորչում—տալիս են անասուններին, որ չատ են սիրում ուտել:

Օ՜, որքան երկար տևեց մեր խօսակցութիւնը. արդէն արեգակը մայր է մտնում, պէտք է չտապել տուն:

Ը Ե Տ Ա Փ Ս

Հետևեալ օրը մայրը մտնում է մանկանոցը և տեսնում, որ Արամն աշխատում է Սաթենիկին համոզել մի ինչ-որ բանի մէջ, իսկ Սաթենիկը բարկանում է և քիչ է ծռում լաց լինի:

—Ինչի՞ մասին էք դուք այդպէս վիճում, հարցրեց մայրը:

—Տե՛ս, մայրի՛կ, ես ասում եմ Սաթենիկին, թէ ինչպէս է ստացւում մետաքսը, իսկ նա ինձ չէ հաւատում և բարկանում է, պատասխանեց Արամը:

—Գիտես, մայրիկ, ասաց Սաթենիկը, այսօր, երբ ես տեղաւորում էի տիկնիկիս չորերը, ձեռս ընկաւ նրա մետաքսէ գոգնոցը. ես սկսեցի նայել և նկատեցի, որ նրա կտորը բոլորովին նման չէ ո՛չ իմ շապիկի և ոչ իմ շալ գգեստի կտորին. ես հարցրի Արամին, չգիտէ՞ նա արդեօք մետաքսն էլ վուշի պէս բուսնում է, թէ խուզում են մի որևէ կենդանուց. այս որ ասացի, նա սկսեց ծիծաղել և այժմ հաւատացնում է ինձ, որ մետաքսը մենք ստանում ենք որդերից: Մայրիկ, ամօթ չէ՞, որ Արամն ինձ յիմար բաներ է պատմում:

—Բայց, Սաթենիկ, դու զուր ես մեղադրում եղբօրդ. նա ոչ թէ քեզ յիմար բաներ է ասել, այլ գուտ ճշմարտութիւն. մետաքսը, իրաւի, ստացւում է որդերից:

Սաթենիկը չռեց աչքերը և զարմացած ըսկսեց նայել մօրը:

—Մայրի՛կ, դու հանաք չէ՞ս անում և այդ ճշմարի՞տ է, որ մետաքսը խուզում են որդերից:

—Ո՛չ թէ խուզում են, պատասխանեց ժըպ-

տալով մայրը, այլ որդերը իրանք մեծ վարպետութեամբ չինում են մետաքսէ երկայն թելեր:

—Ախ, մայրի՛կ, պատմիր չուտով, պատմիր, թէ ի՞նչպէս են որդերը չինում այդպիսի գեղեցիկ թելեր:



—Ահա պատմեմ: Մետաքսի որդը կոչւում է թրթուր: Թրթուր են կոչւում այն բոլոր որդերը, որոնցից յետոյ թիթեռ է դուրս գալիս: Երբ թրթուրից թիթեռ պէտք է դուրս գայ, մետաքսի որդը չինում է իր համար հանգիստ բոյն: Թէ ի՞նչից պէտք է չինէ բոյնը, նա այդ մասին չէ մտածում, որովհետև իր մարմնի միջից է ստանում հարկաւոր նիւթը: Թրթուրի բերանի մօտ մի ծակ կայ, որի միջից նա դուրս է թողնում նիւթը, հարկաւոր եղածի չափ: Թրթուրի առաջին հոգսն է, որ լաւ տեղում չինէ իր բոյնը և երբ տեղը ընտրում է՝ սկսում է չինել:

Ամենից առաջ նա իր թելը գցում է զանազան կողմեր և այդպիսով ցանց է պատրաստում: դա նրա ապագայ տան հիմքն է: Երբ ցանցը արդէն պատրաստում է, սկսում է չինել

իսկական տունը: Տունը չինելու համար նա կուչ է գալիս պատաճև, փորը դէպի դուրս և սկսում է ինքն իրան փաթաթել իր բերանի կպչուն թելով. այդ անում է շարունակ չրջաններ գծելով իր գլխով: Թելերն ընկնում են մէկը միւսին մօտիկ և կպչում են միմեանց: Երկու և կէս օր կարճատև հանգիստներ անելով՝ աշխատում է մեր հմուտ վարպետը: Այդքան ժամանակ նա գործ է դնում իր բոլոր նիւթը, և բոյնը դուրս է գալիս շատ ամուր. ոչ մի տեղում ամենափոքր բացուածք անգամ չէ գտնւում: բոլոր թելերը միմեանց կպչում են շատ խիտ: Մետաքսի որդի այդ բոյնը կոչւում է բոժոժ: Բոժոժի թելերը յետոյ մարդիկ ետ են տալիս և ստացւում է այն փափուկ ու փայլուն մետաքսը, որից գործում են այնքան գեղեցիկ կտորներ:

Մայրի՛կ, ես կարծում եմ, որ թրթուրի համար այնքան էլ լաւ չպէտք է լինի իր մետաքսէ բնի մէջ. չէ՞ որ այնտեղ բոլորովին մութ կլինի և բացի այդ՝ նա ո՞րտեղ է կերակուր ճարում իր համար:

—Թրթուրը բոժոժի մէջ եղած ժամանակ ոչինչ չէ ուտում: նա միայն հանգիստ քնում է. այդ քունը երկար է տեւում—մօտ երկու շաբաթ: Նախ քան քնելը՝ նա դէն է ձգում իր վրայից իրան արդէն անպէտք դարձած մաշկը և այլ ևս չէ նմանւում առաջուայ որդին: Այդ

դրսի թեան մէջ նա կոչւում է հարսնեակ: Զնայելով, որ նա պինդ է քնած լինում, բայց այդ միջոցին աճում են նրա թևերը և մետաքսի որդը դառնում է խոհական թիթեռ: Ահա նա գալիս է և առաջին գործն է լինում պատառել իւր կապանքները:



—Մայրի՛կ, թիթեռը ի՞նչպէս է դուրս գալիս բժժի միջից, չէ՞ որ նա իւր համար դուրս գալու տեղ չէ թողնում:

—Թիթեռը, երբ ուզում է դուրս գալ, մի տեսակ հեղհ ունի, նրանով թրջում է բժժի մի փոքրիկ մասը, թրջած տեղը ուռչում է, թելերը հեռանում են միմեանցից. յետոյ նա այդ թելերը կտրտում է և դուրս է սողում բժժի միջից:

—Մայրի՛կ, ի՛նչ խելօք են եղել մետաքսի որդերը. երևի բժժից դուրս եկած թիթեռներն էլ շատ գեղեցիկ են:



—Այո՛, գեղեցիկ են, բայց ոչ բոլորը, պատասխանեց մայրը: Մետաքսի որդերը բազմատեսակ են. նրանցից մի քանիսի ոչ միայն թիթեռները, այլ և թրթուրները շատ գեղեցիկ են, բայց կան և տգեղները: Նրանք բոլորն էլ չինում են մետաքս,

բայց ոչ փափուկ, և երևակայի՛ր, որ ամենից տգեղ որդերը չինում են ամենից լաւ մետաքսը: Մետաքսի որդը կոչւում է նաև թթի որդ, ուրմէհետև կերակրւում է թթենու տերևներով:

—Մայրի՛կ, այդ որքան որդ պէտք է ունենայ մարդ, որ կարողանայ այնչափ մետաքսէ կտորներ պատրաստել, որ կան խանութներում: Ես կարծում եմ՝ շատ դժուար պէտք է լինի այդքան որդ հաւաքելը:

—Ադոլֆիկս, մետաքսի որդը այնքան օգտակար է մեզ համար, որ մարդիկ շատ վաղ ժամանակից նրան ընտանի կենդանի են դարձրել:

—Ընտանի կենդանի՞, հարցրեց զարմացած Սաթենիկը:

—Այո՛, Սաթենիկ: Ով որ ուզում է բազմացնել մետաքսի որդը, կամ՝ ինչպէս ասում են՝ չերամապահութեամբ պարապել, նա ամենից առաջ աշխատում է նրանց համար կերակուր պատրաստել, այսինքն՝ թթենու ծառեր ունենալ: Յետոյ պէտք է տեղ պատրաստել նրանց համար և այդ տեղը պէտք է լինի մաքուր, օդաւէտ, ո՛չ սաստիկ տաք և ոչ սաստիկ ցուրտ:



Յետոյ արդէն պէտք է ձեռք բերել չերամի որդի սերմը—ձուաները, որոնցից դուրս են գալիս չերամի որդերը: Որդերը դուրս գալուն պէս՝ սկսում են թթենու տերև ուտել. ուտում են չա-

փալանց չատ և սաստիկ արագ մեծանում։ Մի քանի օրից յետոյ նրանք հիւանդանում են. նրանց կաշին այլևս չէ ձգւում, չեն կարողանում մեծանալ. այդ միջոցին դադարում են ուտելուց։ Մի փոքր ժամանակից յետոյ նրանց կաշին պատռւում է, որդը դուրս է գալիս նրա միջից և սկսում է նորից ուտել, սկզբում քիչ, բայց յետոյ սաստիկ չատ։ Ներամի որդը մինչև բոժոժ չինելը. իւր կաշին փոխում է չորս անգամ։ Վերջին անգամ փոխելուց յետոյ՝ որդը մեծանում է էլի լինն օր և մօտաւորապէս հասնում է մէկ ու կէս վերշոկ երկարութեան։ Լինն օրից յետոյ նա սկսում է հիւսել իւր բոժոժը։ Մարդիկ որդերի համար յաճախ են պատրաստում, որի վրայ նրանք ամենայն հեշտութեամբ ձգում են այս ու այն կողմ բոժոժի հիմքի թելերը։ Ինչպէս տեսնում ես, աղջիկս, բոժոժի որդ ձեռք բերելը այնքան էլ դժուար չէ։





Մինչդեռ մետաքսի որդը ուտում է չափազանց չատ, նրանցից դուրս եկած թիթեռները բոլորովին ոչինչ չեն ուտում։ Թիթեռները չուտով սատկում են, նրանք միայն մի քանի օր են ապրում, բայց այդ միջոցին ածում են չատ և չատ ձուներ։ Մէկ թիթեռը կարող է ածել երեք հարիւրից մինչև եօթը հարիւր ձու։

— Օ՜, մայրի՛կ, այդ որչափ ձու է ածում մէկ թիթեռը, չուտով՝ ո՞վ գիտէ՝ տեղ էլ չգըտնուի այդքան որդ պահելու համար։ Եւ ինչո՞ւ մետաքսը թանգ է, քանի որ այդքան հեշտ է որդ ունենալը։

— Այն պատճառով, աղջիկս, որ մետաքսի որդ պահելը չափազանց դժուար գործ է, և բազմաթիւ որդեր ոչնչանում են զանազան հիւանդութիւններից։ Սաթենի՛կ, այժմ դու համոզուա՞ծ ես, որ մետաքսը մենք ստանում ենք որդերից, թէ՞ դեռ ոչ։

— Այո՛, մայրի՛կ, ասաց Սաթենիկը և գըրկելով Աբամին՝ խնդրեց, որ չնեղանայ իրանից։

ՎԵՐԱԴԱՐՁ

Երեխաների համար գիւղում ժամանակը չատ ուրախ էր անցնում. նրանք ամենևին չէին ցանկանում քաղաք վերադառնալ. բայց երբ հասաւ ժամանակը, նրանք ուզէին չուզէին՝ պէտք է հաշտուէին այդ մտքի հետ։ Դալեակն արդէն կամաց-կամաց սկսել էր ամեն բան տեղաւորել։ Վերջապէս հայրիկն ու մայրիկը յայտնեցին, որ երկու օրից յետոյ ճանապարհ պէտք է ընկնեն։

Երեխաները տխրեցին. նրանք նոյնպէս սկսեցին տեղաւորել իրանց իրեղէնները, բայց այս անգամ ոչ այնպէս ուրախ, ինչպէս գիւղ գալիս: Նրանք էլ այս ու այն կողմ ընկնելու բան չունէին. «ի՞նչ վերցնել և ի՞նչ թողնել» հարցերը այլ ևս նրանց չէին անհանգստացնում. հարկաւոր էր միայն տեղաւորել այն, ինչ որ բերել էին իրանց հետ: Հեղինէի բաներին աւելացել էր միայն չորացրած ծաղիկներով լի մի հաստ տետր, որ նա անպատճառ ուզում էր քաղաք տանել, իբր գիւղի յիշատակ. իսկ Աբրամը տանում էր հետը մի արկղ լի գեղեցիկ թիթեռներով:

Երբ երեխաները վերջացրին իրանց գործերը, գնացին «Ծառ բարև» ասելու սիրելի գիւղին: Ամենից առաջ նրանք գտան Սիմէօնին, որի հետ գնացին իրանց պարտէզները և խընդրեցին ծերունուն, որ իրանց բացակայութեան ժամանակ լաւ նայէ բոյսերին:

Հոգ մի անիր, Սիմէօն, ահա այստեղ մի վարդի թուփ տնկի՛ր, ասում էր Հեղինէն:

— Իսկ ինձ համար մի մարգ էլ չինիր, խընդրում էր փոքրիկ Սաթենիկը:

— Իսկ ինձ համար բանջարեղէն ցանելու համար մարգեր չինիր, աւելացրեց Սուրէնը:

Սիմէօնը խոստացաւ բոլորը ճշտութեամբ կատարել և երեխաները համոզուած էին, որ իրանց ծերունի բարեկամը ոչ միայն չի մոռա-

նալ, այլ և մի նոր բան կը մտածէ նրանց բաւականութեան համար:

— Ա՛յ, էլի ինչ պէտք է խնդրենք քեզ, ասաց Հեղինէն, վերցրու մեր թռչնիկներին և պահի՛ր, չմոռանաս նրանց կերակուր և ջուր տալ:

Երեխաների պահած կարմրակատարները, ինչպէս երևում էր, վճռել էին ձմեռել նրանց մօտ. նրանք չէին էլ ուզում թռչել միւս տարագնաց թռչունների հետ. իսկ երբ ցրտերն ընկան, նրանք սկսեցին աւելի և աւելի քիչ դուրս գալ սենեակից: Ահա նրանց մասին էր հոգում Հեղինէն:



Սիմէօնը խոստացաւ չը-մոռանալ գեղեցիկ թռչնիկներին, որոնց ինքն էլ շատ էր սիրում:

Երեխաները մտան և անատնանոցը իրանց կովերի, հաւերի և ճուտերի հետ տեսնուելու:

— Սիրելի Աննա, ասացին նրանք տատարածին, խնդրում ենք լաւ հոգ տանես մեր կովերի և հաւերի վրայ:

— Մանաւանդ չմոռանաս իմ ճուտերին, ասում էր Սաթենիկը: Երբ նորից գիւղ գանք, իմ բոլոր ճուտերը Սևիկի չափ մարճած կլինեն, այնպէս չէ՞:

— Աննա, մեր այծին էլ լաւ նայիր, յիշեց

Հեղինէն և մօտենալով իւր սիրելին, սկսեց փայփայել և համբուրել նրան:

—Երբէք չեմ մոռանալ, հանգստացնում էր Աննան: Եւ յիրաւի՝ ամեն անգամ անասունները-րին կերակրելիս՝ Աննան երեխաների կովերի առաջ մի փունջ խոտ աւելի էր ձգում: Այծի մասին խօսելն աւելորդ է, նա ամենքի սիրելին էր:

Հասաւ վերջապէս ճանապարհ ընկնելու օրը: Աբրամը մեզ էր գալիս թևերը կոտրատած պէս, Հեղինէն և Սաթենիկը լալիս էին: Սուրէնը լաց լինելը աղջիկներին վայել բան էր համարում, իսկ տղաների համար՝ ամօթաբեր: Բայց երբ կառքը եկաւ կանգնեց դռան մօտ և երեխաները նորից գնացին վերջին անգամ տեսնուելու ամենքի հետ և երբ Սուրէնը սկսեց համբուրել Սիմէօնին, այն ժամանակ նա չկարողացաւ այլ ևս զսպել իւր արտասուքը և սրտի խորքից սկսեց լալ ու հեկեկալ: Ծերունին նոյնպէս լաց էր լինում:

Վերջապէս ամենքը նստեցին իրանց տեղերը: «Բարի ճանապարհ», մտրակը վերցնելով՝ ասաց կառապանը. կառքը չարժուեց:

Սկզբում ամենքն էլ լուռ էին: Հայրիկն ու մայրիկը մտածում էին, թէ բան չէ՞ն մոռացել կարգադրելու, իսկ երեխաները—թէ ի՛նչպէս բաժանուեցին գիւղից:

Օ, ի՞նչ են ասպէս տխուր նստել, առաջինը սկսեց խօսել Աբրամը, կարծես թէ բոլորս

վին բաժանուեցինք մեր գիւղից: Լաւ է, եկէք խօսենք, թէ ի՛նչպէս պէտք է նորից գիւղ գանք: Երեխաներն աչխոյժ կերպարանք ստացան և, երբ արդէն մօտենում էին երկաթուղու կայարանին, ամենքը ուրախ-ուրախ խօսում ծիծաղում էին:

Ներանք ճանապարհին բոլոր ժամանակը խօսում էին այն մասին, թէ ամառը որքան օգտակար անցաւ իրանց համար և մտածում էին, թէ ի՛նչ անեն գալ տարի: Աննկատելի կերպով անցաւ ժամանակը և նրանք աստիճ պարմացան, որ այնքան չուտ քաղաք հասան:



ՎԵՐՋ

ՆՈՒԷՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ

1. Վայրի կարապները (սպառուած) 8
2. Առաջին վիշտ (սպառուած) 10
3. Անտառապահը 12
4. Աշխէնն ու Մարզարիտը 10
5. Ազքատի բախտը 5
6. Գոհարիկն ու Ասղիկը 10
7. Նիլլօն և Պատրաշը 10
8. Գիւղում 20

Վաճառւում է Նիկոմիդիական եւ Սուկիասեան գրավաճառանոցներում:

ԳԻՆՆ Է 20 Կ.

0005271

2013

ՀՀ Ազգային գրադարան
NL0005271